



Հ.Յ.Ղ. ԲՆԻՐՈՒ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BUREAU
LIBRARY

ԴԻՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1905

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse
REDACTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Խ Ո Ն Ա Ր Հ Ի Ո Ղ Թ Ա Ք Ը

1903 թվին Հայոց եկեղեցու պետին ուղղած սպառնական հեռագրի մէջ՝ ամենակարողն Պլեյէ այսպէս սղգարարեց՝

„Նորին Մեծութեան վճիռը Հայ եկեղեցական կալուածքների կառավարութեան դարձում՝ անգարծ է եւ Ձեր ամենհպատակ խնդիրքը փոխելու յիշեալ շրջանը, Նորին Մեծութեան կողմից թողնուած է անհետանք“:

Եւ լքուած նորից տիրեց Հայոց կաթողիկոսարանի մէջ կրօնական կենտրոնի մտայլ խուցերում և այն բոլոր գանգերի մէջ, ուր մի քաղաքականութիւն միայն կայ—տղերսանքի քաղաքականութիւն, մի միջոց միայն—արկանել առ ոտս գահոյից. . .

Սակայն այլ էր տրամագրութիւնը շինական անակնբրում, աւանների ու քաղաքների մէջ, ուր Հ. Յ. Գաշնակցութիւնը այլ ճանապարհ էր հարթել—ճանապարհ բողոքի ու դիմագրութեան:

Գեպքերը ցոյցերի փոխակցին: Մասնակի բողոքի ձայները խմբական դիմագրութեան վերածւեցին, և ամբողջ Վովկասը ականատես եղաւ ժողովրդական միաձայն ըմբոստացման, որի նմանը դեռ երբէք չէր արձանագրուած մեր „ստրուկ“ երկրի տարեգրութեան մէջ, առատ արիւնով և դիակներով, բայց դեռ սկսնակ հերոսներով ու կուռով. . .

Արդիւնքը:

Մեր առաջն է այն—հակիրճ հեռագրալուրի ձեռով ստացւած բռնապետութեան կենտրոնական կայանից, օգոստոսի 14-ի թուով, „կայսերական ուկազով—ասում է հեռագիրը—Հայոց եկեղեցական բոլոր կալուածքներն ու գոյքերը վերստին դուռում են Հայոց եկեղեցու վարչութեան ներքոյ“—որ պարզ լեզուով՝ եկեղեցական կալուածքների վերագարծի նշանն է, լուծուած մի խնդրի, որ երկու տարուց ի վեր ջղաձգութեան գիրկն էր նետել մի ամբողջ ժողովուրդ, առանց այն էլ շատ ցաւոտ և վշտաբեկ. . . Գրա հետ միասին, նոյն կայսերական ուկազով, յայտարարուած է վերաբացուած տաս տարուց ի վեր փակուած Հայ դպրոցների:

Միամիտ չը լինենք և ոչ էլ գերի քաղաքական խակութեանն Յայտարարուած „դարձը“ հետևանք չէ բռնակալութեան բնքշացման և կամ վարչական նոր հովերի, այլ հարգաւոր ծնունդ այն սպառնալիքի, որ 93-ի դիմագրու-

թեան օրերից սկսած՝ ինչպէս մշտական երկիւղ, թագաւորում է Թիֆլիսի փոխարքայական պալատի և նրա արքանեակների վրայ, նահանգապետական ապարանքներում: Մարտական քաղաքականութեան պտուղն է այդ, գաղափարական ծնունդը այն զոհ-հերոսների, որոնց արիւնով ներկեցան եկեղեցիների գաւթները, ցոյցերի անմոռաց օրերին. . .

Յանդուգն ու „ամենակարող“ միապետութիւնը գլուխ խոնարհեցրեց, ոտք կոխեց—առաջին անգամը՝ մեր երկրի պատմութեան մէջ—ղիջման շաւղի վրայ, և նոյն գրչով որով լիազօրութիւն էր տւել Հալածամուր Գօլիցինի անլուր, անզուսպ անարգարութիւններին, առաջագրեց նրա յաջորդին—վերջին պահուն—խաղաղացնել Հայկական տրամագրութիւնները, հանգցնել տառութեան և գրգռման բոցը, որով բռնկուած է ամբողջ Հայ ժողովուրդը. . .

Բայց արդէն ուշ է. . . Երկար տարիների անլուր բռնութիւններից յետոյ՝ յաջորդական հալածանքների գագաթնակէտին հասած, ցարի կառավարութեանը չէ կարող այդպիսի զիջումներով սպեղանի պատրաստել խորունկ վերքերի համար, մոռացնել տալ այն ողբերգական մոմենտները, որոնց յիշատակը անջնջելի է, արձագանքը՝ անմոռանալի:

Չը կայ հաշտութիւն:

Բաւական է, որքան գերի և խաղալիք եղանք „սամոզուրների“ և „այլասեռուածների“ ձեռքում: Յեղափոխական մտածողութիւնը և դրա հետ կապուած արիւնոտ կոիւր՝ այլ ևս թոյլ չի տալիս շատանալ կամ աւելի ճիշտ ասած՝ խաբել խոստումների և զիջումների քաղաքականութեամբ: Քսան տարւայ պատմութիւնը դրան նեցուկ: Գօնդուկով—Վորսակովի քաղաքական „աքացիները“ մոռացնել տալու համար՝ Վովկասի գլխին կառավարիչ կարգեցին Շերեմետով: Բայց ինչ օգուտ: Նըւանից յետոյ եկաւ Գօլիցին, և ամեն ինչ բար ու բանդ եղաւ: Գիւղ չը մնաց առանց արտասուքի, քաղաք՝ առանց վշտի: Գօլիցինեան „դժոխքը“ մոռացնել տալու համար՝ ձիթնի ճիւղով Վովկաս ճամբեցին Վորոնցով-Գաշկով—սակայն թիւրք-հայկական ընդհարումները պատուեցին Վետերբուրգում պատրաստած անթափանցելի դիմակը, և միապետութեան այլանդակութիւնը հանդէս եկաւ իր ամբողջ մեծութեամբ, իր գարշաւքի ամբողջ ոյժով. . .

Փաստերը շատ են պերճախօս և չափալանց ա-

ընկնոտ: Այդ փաստերի դիմաց՝ եկեղեցական կալուածների վերագարձը և դպրոցների վերաբացումը ժողովրդական ըմբոստութեան յաղթանակն են, բայց ոչ բազազական հաշտութեան միջոցը: Զինագազարի ժամը դեռ հեռու է: Առաջին զինվածը վաղը կը յաջորդի երկրորդը—ընկերութիւնները կը վերագրուեն իրենց նախկին կանոնադրութեան, աքսորւածները հրաւեր կը սասանան իրանց ծննդավայրը տեսնել—մի խօսքով Գօլիցին, թէ և դեռ կենդանի, կը ջնջել Կովկասեան պատմութեան էջերից: Սակայն դա բոլորը չէ:

Կենք չենք ուզում կախած լինել ոչ միապետի քրմահաճոյքից և ոչ էլ Գօլիցիների կամ Աօրօնցօյ-Գաշկովի տրամադրութիւններից: Մենք ուզում ենք մեր տէրը լինել: Մերը պիտի լինի և դպրոցը, և եկեղեցին, և հողը, և իրաւունքը:

«Բարեխնամ» ցարիզը մեր երկիրը դարձրեց աւաղականոց. աշխատանքի վայրում արիւն սարածեց. տարագիր դարձրեց նրա լաւագոյն որդոց, ոտի տակ տրորեց մեր ամբողջ միտքը, մի ահագին ժողովուրդի պատմութեամբ ու ապագայով. ստրկացրեց նրան հոգեպէս և անտեսապէս, հասցրեց յուսահատ չքաւութեան. բռնացաւ հայի ճակատագրի վրայ նոյնիսկ իր պետութեան սահմաններից դուրս. հազար ու մի անգամ դրժեց իր արքայական խոստումներն ու պաշտօնական հրովարտանքները—կարո՞ղ ենք մենք հաշտութեան ձեռք մեկնել նրան, վայր դնել յեղափոխական մարտի արիւնսներէ զէնքը: Երբէք:

Բարձրագիր, ամենակարող համարւած թագը, ցնցւած ուժգին հարւածներից, խոնարհուած է ժողովրդեան կամքի առջև: Գա փաստ է: Նա որ երբեմն «անմտութիւն» էր համարում հպատակների լսելը, այժմ ժողովրդեան ներկայացուցչութեան ծրագիրներ է յօրինում և կայսերական ուկազով հալածական ժողովուրդին է վերագարձնում մի իրաւունք, որի յափշտակութիւնը երկու տարի առաջ յայտարարւած էր «անդարձ, վերջնական»:

Սակայն թագի խոնարհումը՝ ազատագրական գործի սկիզբն է միայն և ոչ վախճանը: Խլել այդ «թագը» միապետի գլխից և դնել նրան ժողովրդի գլխին, ջնջել բոլոր հարստահարութիւնները, ապահովել աշխատաւոր ու տանջող ընդհանրութեան բոլոր կոխկռտւած իրաւունքները,—ահա այդ կը լինի կուրի վախճանը, խողաղութեան միակ պայմանը: Եւ է. Յ. Գաշնակցութիւնը, իր այս առաջին յաղթութիւնից յետոյ, անշեղ կընթանայ նոյն յեղափոխական կուրի ճանապարհով. ձեռք ձեռքի տւած բոլոր գործօն յեղափոխական կուսակցութիւնների հետ՝ նա կը դիմէ դէպի մեծ ու վերջնական Յաղթանակը:

Մ Ի Վ Հ Ա Տ Ի Ր . . .

Մի՛ վիատիր, յոգնած ընկեր, ոտքի կ'ել, Առաջ թո՛ւր խլիզախ ոգով անարգել. Թո՛ւղ հաւատով լցել սիրտդ այրական, Թո՛ւղ սթալիսին վառ յոյսերդ առնական:

Ինչո՞ւ տրտում հեռու քաշուեմք վիատում, Երբ մենք կեանքի տէ՛ր, լիշխան ենք որոշւած. Կեանքը մերն է. մենք ենք վոխտում անուայմամ Առաջ շարժում նրա ընթացքն անսանմամ:

Մի՛ վիատիր, տես ի՞նչ յամառ ետանդով Մարտիկ կեանքում աշխատում են լի յուսով. Յոյսը նրանց կեանքի ո՛յժ է սլաքվաւում. Յոյսը նրանց առա՛ջ, առա՛ջ է մղում:

Օ՛, մի՛ ընկճւիր, տես թէ ի՞նչ սպէս ամեն ինչ Ունի և՛ վիշտ և՛ քաղցրութիւն արտփիչ. Ցամ ու վիշտը սուր վիշտը են մեր կեանքում. Առանց վիշի վաւր չես գանիլ աշխարհում:

ԺԻՐԱՅԻ

Խ Ա Բ Բ Բ Ե Բ Կ Ռ Ո Խ Ն Կ

Մարտի քամին աչքերս ուղղում. Զնտանի լուկից երկինք աչքերով. Ասի լուրքի մի խորքիկ մը տունիմ. Կարկնի կընցնին սօրանց լուսփուլ

Եսրա՛ւ, Տէ՛ր Աստուած. ի՞նչ կ'ուր ամսայ, Ի՞նչի կընցնին ես տարի չեկամ, Գիշերով զացիմ, յօր ես չը տեղեկմ, Թէ՛ ուրիշ ճամբսով թողլիմ ու յնցամ. . .

Ձան, ձեկի կուռպան, տեսայ քո ջարան, ԶԱստուած կը սիրիս, դու գուտանց չերթաս, Էս միւր վէրից յնցօր քո քարվան. Զի խորցումնք մ'ուրեկիմ, ձիւ ջուհաւ մի տաս:

Դու բարով եկար, ո՞ր տեղ մնացիր, Աստ՛ ձիկ, կուռնի, ի՞նչի յանցըցար. Զուսալ մի տօր ձիւ, ա՛խ սիրտսկ ուստոսս, Դէհ, աստ՛ կուռնի, ամսայ ի՞նչ տեսար,

Դու կը բանձրանաս, ու կը ցածրանաս, Հարսփից կուգաս, կերթաս ի հիւսիս, Տարլի երկու դեր քո բուն կը դնես. Եսպտ, Անդօք, Սիս, Սիփան ու Մասիս:

Ձիկ ընկերներ կան էհ սարանց վէրն, Անսալ ի՞նչ կէնին, խապրիկ մի չունիմ, Տեսա՞ր տո զեմոնք, լի՛ր զեմոնց ձիկ, Զուսալ մի տուր ձիւ. դուրսան քի խոզիս:

Ի՛նչ ումուտներով ճամբախ յէլոյ խ, Ի՛նչ կէր սըտիս մէջ, ու ի՛նչ էր դարձու: Յոկիւրնիս յըմէն չորս տեխ կը կուռլին ես մացի զնտան, էս ա իմ դառ ցաւ.

Ընկերներաի կիւ. ճամբսու դրեցիմ Թւոլիմ էրեցիմ տէրով ամանոթ Գրկուտնք մէկ մէկ պարեցիմք զիրար, Ուրսիս իմ յըմէն սուր ա սուլամիսի,

Միայ չըմ գլխոնը, սահղ են թէ՛ մեռան,
Խառար մի չառայ, վերնի՞ց խարցուցիմ
Ոտո ձեռս սապեր ին, թալիք ին զնտան,
Կոռնիկ քեզմից գատ խաբրբեր չուցիմ:

Դէ՛ն ասա՛ կոռնիկ, տո՛ւր լուր սուետիւ,
Հրայրն ու Վահան անսուլ ի՞նչ եղան,
Ի՞նչ եղաւ Թորգոմ, էն նէվլուզ, Որսորդ
Դրախտիմ, Աղբեր, Երկաթ, Թոխմախ, Խոտն,

Ա՛խ, իմալ ատեմ, ջիկարս կտրտու
Սաս՛ ի՞նչ եղաւ չէհէլ Միմակոր,
Կոռնիկ, ջուա՛յ տուր, լեզուլ պուպանմու.
Յո՛ւրա իմ դարդոտ Ազիզ Քրիստափոր
Ել ս՛ր մէկն ասիմ, ա՛խ, քախուու խողիս,

Մոմուռ մտաւ սիրտս, թուլցաւ իմ սոմեր,
Կոռնիկ, ջուա՛յ տուր, ասո՛ւ, ի՞նչ եղան,
Իմ խարբրմերով կտրիմ ընկերմեր...

Կոռնիկ. ձեմ գետուր, գուր քարվան քաշեց
Թուով, դատընցու, աչքէս կտրուսու
Կտրեց զիմ ումուս, իմ բաժիմ թողեց
Մտթ զնկամ, զնջիլ, սև սուգ դարդ ու ցուս:

Չ. Փ.

Ա Պ Ի Կ Ա Ր Ն Ե Ր

Կովկասեան մեր թղթակիցները յաճախ իրաւացի վայրոյթով արձանագրում են մի եղկելի փաստ, որը մեր ներքին հիւանդոտ դրութեան, մեր մտաւոր ու բարոյական ապիկարութեան նշաններից մինն է: Կան ազիտատորներ, հայ անուն կրող և գիտական վարդապետութիւնների անունից ձառող, որոնք նորընծաներին յատուկ դօրտրինեօրական նախանձախնդրութեամբ՝ ձգտում են հայ կեանքի բոլոր երևոյթները վերածել իրենց սերտած ու դաւանած ֆօրմուլներին:

Թիւրք-հայկական ընդհարումների պատճառները նըրանց «համոզմունքով» հայի և թիւրքի տ ն տ ե ս ա կ ա ն ա ն հ ա լ ա ս ա Ր ո լ Թ ե ա ն մէջ են, հայ սարրի ճնշումների մէջ, նրա նացիօնալիստական հակումների մէջ, և—օ՛ սանձարձակ յիմարութիւն—հայ յեղափոխական կազմակերպութեան ա գ գ ա յ ի ն ո գ ո վ պրօպագանդի մէջ:

Եւ այդ անզուսպ նէօֆիտները, գիտութեան ու անաչառութեան ծիրանի հագած, պանիսլաֆիստին արժանի եռանդով, առանց խղճահարւելու, քարոզում են հայ շրջաններում իրենց այլանդակ պարագօքները, որոնք ի վերջոյ յանգում են այն եզրակացութեան որ հայն ու թիւրքը հ ա լ ա ս ա Ր ա պ է ս յանցաւոր են յայտնում ցարիզմի և իսլամական վիժմունքների յարուցած նշեռնի մէջ...

Երբ այդպիսի յայտարարութիւններ անում են բարոյապէս իսպառ ապականւած, քծնելու և շոյելու արհեստի մէջ վարժւած հայ «ինտելիգենտ»-ֆիլիստերները,—դա մեզ չէ զարմացնում և չէ վրդովում. հասարակութիւնը ճանաչում է նրանց և գիտէ ըստ արժանւոյն գնահատել նրանց աղտեղութիւնները: Բայց երբ այդ տեսակ այլանդակ մաքերի քարոզող են յայտնում գաղափարական կուսակցութիւնների ներկայացուցիչ-

ները,—մենք պէտք է բոլոր ուժով պայքարենք նրանց դէմ և աղդարարենք հայ ժողովրդին, որ նրանք կեղծում են ճշմարտութիւնը, խեղաթիւրում են իրողութիւնները, վիրաւորում են առանց այն էլ վիրաւոր սրտերը.—գիտութեան ու անաչառութեան այդ մեծախօս ասպետները մոռանում են,որ իրենց ընթացքով տնտեսական թէօրիաներ անտեղի ու անհետեւ կիրառումներով անգիտակցաբար վարագուրում են ոճիրը, արդարացնում ու խրախուսում են թիւրքական կրօնը վաններին և ցարի հայատեաց ծառաներին, որոնք հէնց սկզբից, աղէտների առաջին օրերից՝ ծանուցանում էին ի լուր աշխարհի, թէ սուտ է, որ թիւրք տարրը լարւել է իշխանութեան կողմից՝ հայերի դէմ, սուտ է, որ մահապահան խուժանը առաջինն է սկսել զինւած յարձակումներն ու լանկթամուրական գազանութիւնները,—այլ թէ կան տնտեսական խորունկ պատճառներ, որոնք բորբոքել են թիւրքի դժգոհութիւնն ու ատելութիւնը հայ ազգաբնակչութեան դէմ, և թէ այդ վերջինը, առնւազը, նոյնքան յանցաւոր է, որքան իր կոշ ու վայրագ դրացին...

Ահա զզւելի, ցաւագին իրողութիւն: Մեր այդ մանկամիտ «առաքեալները», յանուն ինչ որ մետաֆիզիկական արդարութեան ու անաչառութեան, յաճախ օրիգինալ երևալու համար, աւելի յաճախ՝ «Դաշնակցութեան» գործունէութեանը խանգարելու տենչով՝ պատրաստ են աչք գոցել մահապահան ամբոխի հանրածանօթ առանձնայատկութիւնների առջև, պատրաստ են անգիտնալ նրա մարդասպան ու կուլտուրասպան հակումները, որոնք այնքան աւերիչ կերպով անդրադարձել են մանաւանդ հայութեան ճակատագրի վրայ, լինի Կովկասում, թէ Տաճկաստանում.—այո՛ «տնտեսական լուսաբանութեան» այդ անշնորհ փաստաբանները պատրաստ են միւսնոյն տընտեսական անհաւասարութեամբ բացատրել Տաճկահայաստանի ամենօրեայ նահատակութիւնը, քրդի ու տաճկի աշխարհաստան վայրագութիւնները և այլն և այլն... Լեզուին սանձ չը կայ. նա ոլորտում է հազար ու մի ձևով, անուս ու թերուս «քարոզիչ» բերանում և տգէտ ու հանդուրժող ունկնդիրների առջև թափուում են տխմարութեան մարգարիտները:

Եւ—ցաւօք սրտի պէտք է արձանագրել—հայ յեղափոխական գործիչը հարկադրւած է այսօր իր դժոխային միջավայրում կռիւ մղել ոչ միայն ցարիզմի ու վայրենի խուժանների դէմ, այլ և հարազատ հայրենակիցների դէմ, որոնք սխալ ու անհետեւ լուսաբանութիւն են տալիս արիւնոտ փաստերին, ձգտում են ջլատել ժողովրդական ինքնապաշտպանութեան անհրաժեշտ գործն ու նրա ղեկավար յեղափոխական կազմակերպութիւնը և այդպիսով անգիտակցաբար սատար են լինում խաւար ուժերին:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՑ

Վասն, յուլիս 22.

Տեղական ժողովրդի մտածութեան և մտատանջութեան առտրկան սովն է. նոր չէ որ սկսում է նա: Գեւ. անցեալ աշնանից զգալի էր բերքի պակասութիւնը.

կամաց-կամաց ձմրան մօտենալով, սկսում է նկատել հացահատիկների պահասութիւնը և արժէքի բարձրանալը, թէև սկզբում թեթև կերպով—բայց բանի գընում աւելանում է և վերջապէս ձմրան ամիսներին լուրջ բնաւորութիւն է ստանում սովը: Քաղաքում հաց-թուփները սկսում են դադարեցնել կանոնաւոր և պարբերաբար հաց վաճառելը, և այդպէս արհեստական կերպով հացի գինը բարձրանում է: Առավարութիւնը, գիտակ այդ բանին, ոչ միայն որևէ միջոց ձեռք չէ առնում սահմանափակելու, այլ ընդհակառակը, աւելի գիւրութիւններ է տալիս այդ արհեստականութեան. չէ որ նրա նպատակներից մէկն էլ՝ ազգաբնակչութիւնը անտեսապէս քայքայելն է. . . Նա ձեռնարկում է հարկահանութեան, բայց խօսքս «օրինաւոր» ճանաչած հարկերի մասին չէ, որոնք ամեն տարի պարբերաբար հաւաքւում են, ոչ—այլ բաղադրային (յաւելեալ սուրբեր), որը չափ ու սահման չունի, ոչ էլ սկիզբ ու վերջ: Եւ ի՞նչ գոխային չարչարանքներով. . . Բայց ի՞նչ ասել այդ չարչարանքների մասին, չէ որ հազարաւոր անգամներ սոււած, գրւած է, և մի առանձին նորութիւն չենք ասի. . . Այնքան անգամներ լսել ու կարդացել են գրսեցիները Տաճկահայաստանում տեղի ունեցող չարչարանքների ու բարբարոսութիւնների մասին, որ սովորական համարելուց բացի իրանք էլ յօգնել են, և ներկայումս թերևս նման ընթերցումները միմիայն ջղեր գրգռեն: Ի՞նչ անենք, որքան էլ հանրածանօթ լինի, մենք լուր-թեան չենք կարող տալ այդ տեսարանները մեր աչքի առաջ է կատարւում, շարունակ ականատես և ականջալուր ենք մրմնջացող ցաւերի ու թշուառութեան, մենք չենք կարող բռնաբարել մեր զգացողութիւնը և չարտայայտել մեզ պատկերացրած չարչարանքների սոսկումը:

Մարդկանց գլխի վայր կախելը անտուրի մէջ, բերաններին անասունների աղբ լցնելը, անգթօրէն գանակօծելը, բերանները բաց անել և մէջը թքելը, և այլն, հանրածանօթ են անշուշտ, բայց հանրածանօթ լինելով՝ մընում են իբրև տանջանք, և երբէք էլ այդ դժոխային չարչարանքների, ցաւերի ու կսկիծների աստիճանը չէ պակասում մարդուս. . . Գեռ մի կողմը թողած հազարաւոր լիտի արարքներն ու հայհոյանքներն տարափը, որ թափում են «գեռաւորի» հաւատալիքների, կրօնի, խաչի, եկեղեցոյ, մի խօսքով բոլոր ներկայան սրբութիւնների հասցէին, անմասն չեն մնում և ընտանեկան սրբութիւնները, ընտանեկան պատիւը: Այդ ահի և երկիւղի տակ հայ գիւղացին բնականաբար ունեցած չունեցածը կիսագին ծախում է և մի կերպ գոհացում տալիս ու հեռացնում. բայց գոհացումը ոչ թէ յաւելեալ սուրբի վճարմամբ է, այլ եկող թապալտասչիւնների (հարկահաւաքների) բերանը մի բան ձգելով—կաշառելով—որ պէս զի բաղբիւրն յետաձգել յաջորդ տարւան: Եւ ահա այս դէպքում էլ այդ հարկահաններն են մրցման մէջ մանում իրանց գազանութիւններով՝ թէ որը աւելի իւրոտ պատաս կըշահի: Քմահաճոյքների այս վայրերում հասարակական շահերի, ընդհանրութեան օգտի մասին խօսել ու մտածելը անհաստական արարքների պատասխանատուութեան ենթարկելու տեսակէտից (կառավարչական շրջաններում անգամ) հակաբնական երևոյթ է. այսպէս է այս երկրի ճակատագիրը, այսպէս արգարութեան ու բարոյականութեան հասկացողութիւնը:

Սանձարձակ են թասելատասչիւնները. իբրև կառա-

վարչական պաշտօնեաներ, ամեն իրաւունքներ բանեցնելէ զատ՝ ամենաճարպիկ խողեր խողացող են՝ թէ կառավարութեան և թէ ժողովրդեան գլխին. որևէ գիւղ եթէ իրենց պահանջներին գոհացում չաւեց, իրենց նշանակած կաշառքի, բառափուլի բանակութիւնը մերժեց—պատրաստ են՝ ի վրէժխնդրութիւն, կառավարութեանը ներկայացնել գիւղը իբրև յեղափոխական և ահա գիւղացոց ընկճեցնում են. . . չէ՞ որ ոստիկաններ պէտք է գան, ուտեն, խմեն, աւրեն, խուզարկեն և վերջն էլ մի գոհացում—քառափուլ—ստանան, որ հեռանան: Այս բոլորը գիւղացիք լաւ են ուսումնասիրել և գիտեն թէ ինչու ընտրում են երկու չարեաց փոքրագոյնը: Գոհացնում են այդ գայլերի որկորները, աւելի մեծ գազաններից խոյս աւած լինելու յոյսով:

*
 Քանի գնում աւելի և աւելի հրամայական է դառնում հացի պահանջը: Ամբարտեհները ոսկիներ գիղելու իրենց տնայնքների սահմանում՝ աւելի և աւելի են թանգացնում. հացի գինը 38-ից հասնում է մինչև 54—56 դահեկան (մի չափը): Գիւղացին դրամ չունի, թէ ունեցած դրամը և թէ անասունների մի մասը ծախել է այս կամ այն կարիքը հագալու. մի կերպ նա անցկացրեց ձեռքը—յոյսը գարնանն վրայ դնելով, թէ Աստուած ողորմութեան դուռը կը բանայ: Այսօր արդէն գարուն է, բայց ողորմութեան դուռը չը բացւեց: Նա հաց չունի ուտելու, բայց այդ մեծ ցաւ չէ, կանաչ է դուրս եկել, և նա արմատիքով—խոտով բոյսով քարը կը տայ իր գոյութիւնը: Մեծ ցաւը դեռ մնում է. սերմ չունի գիւղացին իր վարած, հերկած արտը սերմանելու. ահա այստեղ է որ մույլ յուսահատութիւնը պատում է գիւղացուն, և նա միայն նոր է զգում իր սեւ օրը, իր վիճակի որ աստիճան դուռ լինելը Չմեռը նա աւելի մխիթարական դրութեան մէջ չէր. բայց և յոյսը գարնան վրայ էր դրել, կծկած իր թոնրի շուրջը, կիսամերկ-պլուզ, ամբողջ երևակայութիւնը տանջում էր, թէ ի՞նչպէս մի ձեռք գլուխ հանի. խեղճ գիւղացին կարծում էր թէ սովի էլ անմիջական հետեանք է ձմրան, և ձմրան վերանալով սովի էլ չբանալու է: Բայց նա մնաց յուսախափ, և աւելի վատթար դրութեան մէջ ընկաւ. երկու գարունը իր հետ բերելով—հակառակ սպասածին—աւելի ծանր հոգսեր ու ճնշող մտատանջութիւններ: Լաւ է գարունը, կենսատու, ուրախ, զաւրթ, բայց ոչ այս երկրի և ոչ էլ այս ժողովրդի համար: Նա աւելի խորը կերպով է ցնցում ազգաբնակչութիւնը, իր չքաւորութեան պատկերով: Քանի որ նա այսօր սերմ չունի, էլ ի՞նչ յոյս ունենայ հունձքի վրայ, ապագայ ապրուստի վրայ, նոր-նոր կարիքներին, հարկերին և այլն պահանջներին գոհացում տալու ի՞նչ անկալութիւն:

Եւրոպական շրջանակները (հիւպատոսարաններ, միսիօնարներ և այլն) գիտակ այս բոլորին, որևէ միջամտութիւն ցոյց չը տւին արհեստական սովի առաջն առնելու. քաղաքում սովը համաճարակի բնաւորութիւն էր ստանում օրէցօր: Հարիւրաւոր ամբոխը օրերով հաւաքւում էր հացավաճառների խանութների առաջ մի կըտոր հաց ձեռք բերելու, բայց օրնիբուն սպասելուց յետոյ կառավարութեան ոստիկաններով ցրւում էին դէպի իրենց աները դատարկածեռն: Ի՞նչ հիւպատոսների կամ այլ եւրոպացիների հոգն էր, չէ՞ որ նրանց

Համար յատուկ, լաւ ցորենի մաքուր հաց էր պատրաստուում, նրանք անձնականապէս բողոքելու կամ դժգոհելու պատճառ չունէին:

Ղանի ամերիկեան միսիօնարների բողոքական շրջանակը բաղաձայն չբաւարար ընտանիքներից մի քանի տասնեակ անձանց սկսեց օրւայ պարէն հաց բաժանել. այդ բանը առիթ տւեց շրջանի գիւղերի բազմաթիւ դիմուհիների օգնութեան ակնկալութեամբ: Շրջանակը արձագանք տւեց և գործակալներ հանեց գիւղերը — կարօտեալներին ցուցակագրելու՝ նրանց նպաստ (դրամական) և սերմացու տալու դիտուումով: Մի թշուառութեան դուռն էլ այս հանգամանքը բացաւ ժողովուրդեան համար. բոլորը լիայոյս, մեծ-մեծ ակնկալութիւններով ամիսներ շարունակ սպասեցին, ձեռները ծալած այդ օգնութեան: Ցուցակագրւածներին անկարող դոհացում տալ — սկսում են սահմանափակել կարօտեալների թիւը և բաշխում են իւրաքանչիւր կարօտեալ անձին ոչ աւելի քան 60-ական փարայ (ուռսական 12 կոպ): Ինչ պէտք է հոգացել այդ միանաւագ ստացւած 60-ական փարայով դայթակղութեան դուռն է միայն և խռովութիւնների պատճառ... Ինչ ասես չէ անցել դարձել — կուր, խայտառակութիւններ, թշնամանք՝ ստացող և չը ստացող ցուցակագրւած կարօտեալների մէջ: Իսկ սերմացու տալը մինչև օրս չիրականացաւ. և դատարկ յուսադրանքը խաբեց կարօտեալներին, ստիպեց իրենց գլխի ճորը տեսնելու, դժբախտաբար իրենց ունեցած չունեցածը ծախելու, ևքանի ուշ չէր, միբուռը սերմ ձարելու հողին պահ տալու, նոր հունձք ակնկալելու:

Քրիստոնէական գաղափարի այդ առաքեալները ամեն բան իրենց շահի տեսակէտով են չափում ու ձեռում... Այդ բոլոր տարրերը կան թիւրքահայ ժողովուրդի թէ անտեսական և թէ բողոքական կեանքում. և ահա շահագործումն իր անսահմանութեան մէջ: Ինչ և է, ժողովուրդը — խեղճ, չունեւոր մասսան — դիմում է նըրանց, չէ որ բողոք յագեցնելը որեւէ բարոյական օրէնք չէ ձանաչում. ճիշտ նոյն վիճակի մէջ է հայ ազգաբնակչութիւնը. առանց զգալու թէ ինչ բարոյական զոհողութեան գնով է ձեռք բերում այդ նպաստը, 60-ական փարան, առանց իրեն հաշիւ տալու, նա շարունակ դիմումներ է անում... Բայց ինչ ասել քրիստոնէական գաղափարի այդ առաքեալներին, որոնք շահագործում են ժողովուրդի չբաւարութիւնը, և քրիստոնէական բարերարութիւնը՝ գծուծ «բարերարութեան» են վերածում՝ իրենց տրիտուր ակնկալութիւններով — ժողովուրդ որսալու դիտուումներով: Բայց թողնենք դրանց:

Կառավարութիւնը — իրօք ցանկացող այս բոլորին — խաբուսիկ հնարներ միշտ գտնում է եթէ ոչ ժողովուրդեան, գէթ օտարների աչքին թոյլ փչելու համար: Չրի կերպով հանդիսանալու համար իբրև «բարեխնամ» կառավարութիւն իր հպատակներին, իբրև կարեկից և օգնող ժողովուրդին՝ ներկայ անտեսական տագնապի ժամին, նա իր բանկայից (բանձարանից) ավանտով դրամ է բաց թողնում գիւղական հասարակութիւններին, սկսած 200-ից մինչև 2000 և աւելի գահեկան (ի հարկէ որոշ, կալածական սպասով կրաշխառութեան պայմանով): Այդ դրամը վերցնում են հարուստ, անւանի մարդիկ՝ չունեւորներին բաժանելու՝ նրանց անհրաժեշտ պէտքերը հո-

գալու համար, չմտանանք ասել որ մինչև այդ դրամը ստանալ գիւղ հասցնելը որոշ ծիսակատարութիւնները մի յայտնի 1/10-ը կուր են տալիս արդէն: Բայց ինչ են այդ չբաւարար և սոված գիւղացիների «անմիջական կարիքները». ոչ այլ ինչ, եթէ ոչ կառավարութեան «որինաւոր» ձանաչւած հարկերի պակասորդը լրացնելու, կամ բաղքիայի յետաձգութեան և այլ անակնկալ նոր երևան եկած պահանջների դէմ՝ պաշտօնեաներին քառափուլ (կաշառք) տալը: Ահա այս օգուտն է տալիս բանկան — մասամբ թեթևացնում է ժողովուրդի չարաբանքը — թէև այդ դրամով գէթ նւազագոյն չափով սովի առաջն երբեք չէ առնւում, և դեռ գալիք տարիների պարտքերի վրայ նոր նոր պարտքեր է աւելացնում:

Մի նոր ձևի խաղ ևս Ղասպուրականի գաւառներից մէկում: Կառավարութեան համար ակընյայտ է, որ հայ ժողովուրդը դարերէ ի վեր կապւած է իր կրօնի հետ. միւս կողմից նա (կառավարութիւնը) չէ կարող անտես աւնել ժողովուրդեան մէջ առաջ եկած տրամադրութիւնը դէպի յեղափոխութիւնը: Ժողովուրդեան այդ ինքնաբերաբար յեղափոխութեան փարելը (լինի գինտակցօրէն թէ անգիտակից) միայն որեւէ ակնկալութեան յոյսով իր վիճակի բարեփոխութեան նկատմամբ, չէ որ չարիք է իր կործանիչ քաղաքականութեան դէմ: Ուստի նոր նոր միջոցներ է մտածում. յայտնի է, որ մինչև օրս կառավարութիւնը իր բոլոր բայերը և դիւային ծրագրերը ի գործ է դրել՝ միշտ վարպետութեամբ բողոքակցով յեղափոխական պատրասկների տակ, ամեն բանի մէջ յեղափոխականներին սկզբնապատճառն ու վախճանը համարել — այսօր նա գալիս է մի ուրիշ ծրագրով: Մինչև օրս բացարձակ հային «գեաւուր» համարող կառավարութիւնը ուզում է հայ ժողովուրդեան հաճելի գաւառը գաւառի միւս կողմը (գաւառապետը) գէթ ներկայումս այդպիսի մտքերով է մօտենում ժողովուրդեան սիրաշահելու համար — կառավարութեան հաշտ աչքով նայելու դիտուումով: Նա այցելում է իր գաւառի հայ գիւղերի եկեղեցիները, մտիկ տալիս, յորդորներ կարգում՝ եկեղեցիները մաքուր և բարեկարգ պահելու, սէր և յարգանք տածելու դէպի եկեղեցիները, զոհաբերութիւններ անելու — նոյնիսկ ստիպողութեան տակ դրամական ծախսերը հոգալու և այլն. ուշ է արդէն թիւրք կառավարութեան համար՝ այդ տեսակէտով օգտուելու: Եթէ այդ «հնարագէտ», «գիւլլոմատ» կառավարութիւնը սկզբից և եթէ հաշտ աչքով նայէր քրիստոնէայ ազգաբնակչութեան — թերևս յաջողութիւն ունենար կամ չունենար, դա այլ ինքիւր է. բայց ներկայումս նա անկարող է թող փչել հայերի աչքին: Գոցւած աչքեր չը կան այլևս, և ոչ այնքան միամիտ հաւատացողներ՝ այդ խաղերին: Գէթ ինքը կառավարութիւնը թող ի զուր ջանքեր չը լծափի մեզ համոզելու, թէ հաշտ և ներողամիտ աչքով է նայում դէպի մեր կրօնը, որի հաւատացողներին ներկայումս էլ չէ քաշում պաշտօնապէս «գեաւուր» անւանել և իբրև «գեաւուրների» իրաւազուրկ ձանաչել:

Հայ ժողովուրդ, բաւական է որքան խաբուսիկ երևոյթները կան քեզ մոլորեցնելու: Թամանակը հասել է ձեռք բաշխելու մի անգամ ընդմիշտ այդ կեղծ ու պատիր, «բարեխնամ», «հաշտ վերաբերմունքից»: Քո փրկութիւնը քեզմէ յուսա, յոյսդ դիր քո թշուառ,

բայց տակաւին կենսունակ բազուկներով ու բարոյական ուժերով վրայ...

II

30 յուլիս.

Կառավարութիւնը՝ միանգամայն կոյր ժողովրդեան ներկայ անտեսական ճգնաժամի դիմաց՝ աւելի խիստ և յախուռն կերպով է հաւաքել տալիս յաւելեալ տուրքերը—բաղքեաները* Գալիս են բնիչները (ժամուռները), ժողովուրդը արդէն շատոնց ծանօթ նրանց արարքներին խոյս է տալիս, գիւղի ուսը և իր աղաները կրակն են ընկնում: Պէտք է ճարել. սկսում է խոյտառակ սակարկութիւնը այդ բնիչների կողմից ամենաբարձր չափից մինչև ամենափոքրը: Բռնեցնում են միշտ 50-ից և իջնում մինչև 10 կամ 15-ի օսմանեան ոսկու. պէտք է տալ թէկուզ ի՛նչ կերպ էլ որ լինի. որքան ուշացնեն այնքան աւելի նիւթապէս քայքայւելու են. եկողները ապրում են գիւղացու հաշուով. ոչ մի բանի չեն հաւանում—իրենց ուղածն են անում, էլ գարի, խոտ ձիաներին ամենայն առատութեամբ իրենց համար հաց, իւղ, հաւ անհաշիւ, ստիպած շուտ հեռացնելու գիւղից. գնում են մօտակայ թիւրք, քիւրդ աղաների մօտ և սալաֆին (տոկոսի) դիմում. վերցնում են 10—20 ոսկի մէկ կամ երկու ամսով՝ վճարելով 3—6 ոսկի տոկոս: Բերում են ճանապարհ ձգում, և ազատ շունչ քաշում: Թասելգաչներին կարողացել են բաւականութիւն տալ 15 ոսկով. իսկ 15 ոսկին ճարել են հետևեալ կերպով. 10 ոսկին վերցրել են մօտակայ քիւրդ աղայից մէկ ամիս ժամանակով—գումարի վրայ աւելացնելով 3 ոսկի տոկոս,—իսկ 5 ոսկին վերցրել են իրենց գիւղի մի հայից երկու ամիս ժամանակով տալով 6 ոսկու մուրհակ: Երբ ամիսը լրացել է քիւրդ աղան պահանջել է իւր գրամը: Ի՛նչ անել, եթէ չը վճարել՝ ամէն ամիս պարտաւոր են նորագել մուրհակը՝ մայր գումարի վերայ աւելացնելով 3 ոսկի: Գնում բանքայից վերցնում են 10 ոսկի վճարում քիւրդ աղային. իսկ մնացած 3 ոսկուն 1 1/2 ոսկի նորից տոկոս նշանակում մի ամիս ժամանակով՝ վճարելու պայմանով: Իսկ հայից վերցրածը գեւ մնում է: Դեռ գիւղացիք գոհ են, որ այսպէս թեթեւ պրծան—թէ ոչ՝ 10—15 ոսկի հէնց նրանց ծախսն էր նստելու: Ունեւորները կոպէկի վերայ դողում են, իսկ երբ չը կայ, անհաշիւ նետում են պարտքերի դիրկը, ի՛նչ անեն, դժոխային վիճակում ի՛նչից վախենան. ապագայի ոչ մի յոյս—փրկութեան ոչ մի ելք այս դրութիւնից: Մի պերճախօս ապացոյց: Այս հարկերը վճարելու պատճառով հարկագրւածներից մէկը ծախում է իւր 6 չափ ցանած արտը մի քիւրդի, փոխարէնը առնելով 5 1/2 չափ գարի: Թողնում են ձեզ հաշուելու, թէ դա ի՛նչ տոկոս է նստելու: Ի՛ր արտը, ի՛նքը վարել, հերկել, ցանել, և այսօր, երբ կանաչել է և 2—3 ամսից հունձ է տալու, ծախում

է իր սերմի չափից էլ պակաս արժողութեամբ: Բայց ինչպէ՞ս մեղադրել այդ մարդուն. չէ՞ որ խեղդուողը ձեռքը տերևների է դցում՝ փրկելու յոյսով: Այս դէպքը բացառիկ երևոյթ է, այլ շատ շատերից մէկը: Հարկաւոր արտեր են ծախում, և թերևս այս է պատճառը, որ գիւղացու ձեռքին լաւ հողեր չէ մնացել (բացառուութիւն կազմում են հարուստները), անցել է կամ քիւրդ աղաների ձեռքը, կամ կառավարութեան—որը իր բանքայից դրամ է բաց թողնում «ողորմածաբար», ժողովրդեան «բարիք» անելու քողի տակ—բայց իրօք բոլոր կալածները, արտերը, այգիները, անտառները և այն գրաւելու դիտումով և դա անարգելի օրէն յաջողում է:

Այդ ձևով հաւաքւած բաղքեաներից դեռ կառավարութեան դանձարան էլ չէ մտնում. օրինակ Հայոց ձորի գիւղերից մէկում յունւար ամսին գազանային բռնութեամբ հաւաքած 3—4000 դահեկանը դեռ «Սանդըլ փուլի» չէ արւած, և այդ գիւղացիք դեռ գնում գալիս, ինդրում աղաչում են, որ «բոչանի» (ստացական) ստանան, բայց իլուր. այս է եղել սկզբից ի վեր տաճկահայի դրութիւնը և կառավարութեան վերաբերմունքը, բայց ներկայումս այլևս ուժ չէ մնացել. միանգամայն քաքայլել է անտեսապէս—խեղդւել մինչև կոկորդ քիւրդ աղաների պարտքերի տակ: (Հայ հարուստը զբուշանում է տոկոսով դրամ վճարել, նա վախենում է յեղափոխականներից, իրեն լաւ է ցոյց տալիս, թէ և խուլ անկիւններում գաղտագողի շարունակում է իր վաշխառութիւնը):

Հացի գինը այժմ աւելի է բարձրանում—մի բան, որ վկայում է, թէ նա պակասում է. եթէ կան մի կամ մի քանի մասնաւոր մարդկանց մօտ, նրանք էլ ըստ իրենց աւանդական սովորութեան շահագործում են՝ օր օրի վրայ արժէքը բարձրացնելով: Այժմս դրամ ունեցողները չեն կարողանում 62—64 դահեկանով մի չափ ցորեն ձեռք ձգել. իսկ ի՛նչ քարը տայ գլխով աղքատը—գիւղացին, երբ 5—10 փարայ դրամ էլ չունի: Սերմից այլևս ձեռք պէտք է քաշել, արդէն ուշ է, և ոչ մի միտք էլ չունի այժմս սերմ գցել հողի մէջ—իսկ բնութիւնը յամառում է իր երաշտութեան մէջ:

Չը գիտենք, սա ի՛նչ խաղ է, որ ծրագրւած է: Շուկներ են տարածում ժողովրդեան մէջ, թէ կառավարութիւնը երկու հազար չափ ցորեն է բաց թողել իր սեփական գանձարանից՝ ժողովրդեան սերմ բախշելու համար: Հաւատանք այս լուրին: Իբր թէ կողմակերպւում է յատուկ յանձնաժողով՝ ցուցակագրելու կարօտեալներին, և օրինաւոր ու արդարացի բաշխումը խստիւ պատւիրած է. որեւէ գեղծում դործողը անմիջական պատասխանատուութեան է ենթարկւելու: Չպտել ամեն մի հնար դործ գնել ժողովրդեան դէպի կառավարութիւնը լաւ տրամադրելու, նրանից ակնկալութիւններ ունենալու—ահա այս են ներկայումս կառավարութեան ջանքերը. բայց կը յաջողի արդեօք—այդ էլ ինչիք է:

Կ Ո Վ Կ Ա Ս

Գ Է Պ Ք Ե Բ Ը Թ Ի Ֆ Լ Ի Ս Ո Ի Մ

Ընթացիկ կեանքը օրէցօր աւելի ու աւելի անտանելի է դառնում ամբողջ Ռուսաստանում և մանաւանդ

*) Ռուսոք. 96 բալլադին վարպետականի նախնային րկնամուտը կառավարչի և բալլադիստի «Իտալիանո» կառավարչի իրեն լեքեւորիս ժողովրդեան՝ երեխանի ապուս է բողի կառավարական հարկերից յայտոյ ստիճանում գանձելու պայմանով—և այդ երեխանայ յեկեկ հարկերն են, որ ամեն սարի հաւաքում են արտադր կարգի—սովորական հարկերից: Ամն անգամ (առանց որոշ ժամանակի կամ սարայ որոշ եղանակի, ինչպէս օրինակ րկնամուտ է Ռուսաստանում—գարնան և աշուն) երբ կառավարութեան պատճենները պէ՛տք է կր գրան դրամի—դիցում գործի ամսական կամ ամսի ինքնապարտաւոր հուզում—անմիջապէս բողիկապիները պատրաստ են դուրս գալու գիւղից:

Վովկասուում: 24-այ հանգստութիւն, չկայ կեանքի ու գոյքի ոչ մի ապահովութիւն, որովհետեւ կառավարութիւնը ամեն կողմից առաջ է քաշել խաւար ուժերը և նրանց լարել է հասարակութեան դէմ: Մի կողմից թիւրք ամբողջն է արիւն հոսեցնում հայաբնակ վայրերում, իսկ միւս կողմից «խուլիգաններն» են համարձակ քայլեր առնում մարդաշատ քաղաքներում:

Թիֆլիսը դրանց գործունէութեան գլխաւոր կենտրոնն է դարձել և ոստիկանապետ Վովալեօփը նրանց եռանդուն կազմակերպողն ու ղեկավարը: Վերջին ժամանակներս քանի ժողովներ, քանի հայրենասիրական ցոյցեր կազմակերպեցին դրանք:

Բայց այդ քանը բաւական չէր կառավարութեանը. նա զէնքեր է բաժանում դրանց «ինքնապաշտպանութեան համար»—ս: Վնցնում է մի քանի օր և խուլիգանները սկսում են գործադրել զէնքերը, ալ ու ծախ սպանելով բանտրական կազմակերպութիւնների ազդեցիկ անդամներին:

Այդ ամէնը մեծ խլրտում է առաջացնում բանտրների շրջանում. վերջապէս, վճռում են ընդհանուր գործադուլի միջոցով ստիպել կառավարութեանը զինաթափ անելու խուլիգաններին: Վենտրոնական ղեկավար մարմինները հակառակում են այդ վճռին, բայց բանտրների յուզմունքն այնքան մեծ էր, որ դիմադրելն անհնարին էր դառնում:

Սկսեց գործադուլը, որի ամբողջ տևողութեան ընթացքում 8 օր շարունակ կեանքը կանգ էր առել բառիս բուն նշանակութեամբ. փակ էին բոլոր խանութները, չէր երթեւեկում տրամվայը: Ամբողջ ոստիկանութիւնը, ժանդարմները և բաւական մեծ քանակութեամբ զինւորներ շրջում էին փողոցներում, կոտորատում էին փականքները և ստիպում բանալ խանութները. բայց ապարդիւն. մըտրակի ու մուրճի հարւածներով բացած խանութը նորից փակում էր և կեանքը նորից իր մեռած տեսքն էր ընդունում:

Վերջապէս ամսի 24—25-ին սօցիալ-դեմոկրատները սրղեցին յեղափոխական աւելի ախիւ քայլեր ածել: Բաղաքի զանազան մասերում մի քանի սոււմբեր են գցում կողակների և պրիստաւանների վրայ: Անասները աննշան են լինում, բայց առաջացած խլրտումը շատ մեծ: Վատաղած կողակների խմբեր լցւում են փողոցները և ալ ու ծախ հտրւածում, սպանում ու ձերբակալում պատահած մարդկանց:

Յայտարարում է զինւորական դրութիւն. սակայն այդ բանը ժողովրդից ծածուկ է մնում 2—3 օր, որովհետեւ ոչ թերթ էր լոյս տեսնում և ոչ էլ տպարաններն էին աշխատում, որ հնարաւոր լինէր այդ մասին գոնէ մի լուր տպել: Նոյն իսկ փոխարքայի տպարանը մասնակից էր գործադուլին:

Վերջապէս բանտրները որոշում են սկսել աշխատանքը, 27-ին: Այդ ժամանակ փոխարքան հրաման է արձակում 27-ին ով որ աշխատանքի չը դուրս գայ, նրան յանցաւոր համարել և խիստ պատժի ենթարկել: Այդ հրամանը նորից կատարեցնում է բանտրներին. նրանք խկոյն վճռում են մի օր էլ շարունակել գործադուլը, շարունակել որպէսզի ամբարտաւան փոխարքայի խրոխտ հրամանը խախտուակ կերպով անկատար մնայ և նա համոզւի թէ ինչ ոյժ է ներկայացնում յեղափոխական հոսանքը: Վճիռը կատարւում է. 27-ին ամբողջ քա-

ղաքը մեռած է մնում, իսկ 28-ին միայն բանտրական կազմակերպութիւնների կարգադրութեամբ, սկսում է իր սովորական կեանքը...

Սակայն զինւորական սոսկալի դրութիւնը դեռ շարունակում է, փողոցներում վխտում են կողակներն ու զինւորները: Ամեն քայլափոխում և ամենքին խուզարկում են, առանց խտրութիւն դնելու տղամարդկանց և կանանց միջև: Խուզարկում են ամենակոպիտ ձեւերով, գրպանները, շորերի տակը: Բայց այդ դեռ բոլորը չէ: Խուզարկելիս թալանում էլ են: Ինչ կարելի է անել. եթէ բողոքեցիր, հրացանը ձակատիդ կողղեն... Խուզարկում ու թալանում են ոչ միայն գիշերը, այլ և ցերեկով. մի փողոցից մինչև միւս փողոցն անցնելը մի 10 անգամ խուզարկում են. համեմատաբար աւելի ապահով է կառքով ու տրամվայով ման գալը...

Եւ դա կոչւում է կարգապահութիւն ու խաղաղութիւն:

*

Սակայն բոլոր նշաններից երևում է, որ ոչ Ռուսաստանում, ոչ էլ մասնաւորապէս Վովկասում դեռ երկար ժամանակ խաղաղութիւն չի հաստատուի: Ստացուած տեղեկութիւններից երևում է, որ խլրտումը արդէն գորքի մէջն է անցել: Ալէքսանդրօպօլի մի գունդ զինւորներ անհնազանդութեան ցոյց են արել օֆիցէրների դէմ, դեռ նրանց յուզմունքը չէ դադարել և կարող է ապագայում աւելի խոշոր չափեր ընդունել: Գանձակի մի գունդ իբրև բողոքի նշան հրաժարել է կերակրից, պահանջելով դրութեան բարեփոխում:

Այդ բոլորից կարելի է գաղափար կազմել թէ որքան անտանելի պայմաններ է ստեղծել ուսու բռնակալ կառավարութիւնը:

*

Փոխարքայի օգնական Շիրինկինը վերջին օրերս վերադարձաւ Պետերբուրգից: Թէ ինչ յանձնարարութիւններով վերադարձաւ— դա առայժմ գաղտնիք է: Յայտնի է միայն այն, որ իր հետ բերել է 40 գեղեցկուհիներ: Գուցէ ընթացողները կարծեն, թէ նա հարեմ է ուղում հիմնել, բայց այդպէս չէ:

Շիրինկինի նպատակը ոչ հարեմ պահելն է և ոչ էլ կովկասցիներին հաճոյք պատճառելը:

Նա այդ կանանց բերել է լրտեսական պաշտօնների համար և նրանք արդէն սկսել են եռանդուն գործունէութիւն:

Լրտես կին, լրտեսութիւն՝ սիրաբանական խաղերի միջոցով— ահա թէ ինչպիսի առաջադիմութիւն է անում Ռուսաստանը:

*

Աւշայտում բռնել են չորս փութ ուժանակ: Թիֆլիզում մի քանի տեղեր բաց են արել սոււմբի գործարաններ: Թիօնէթի կողմերում ուսու զինւորները սպանել են իրենց կապիտանին և կարող է պատահել որ ապստամբին: Նոյն տրամադրութիւնը նկատելի է և այլ տեղերի զինւորների մէջ. գլխաւորապէս սօցիալիստ-յեղափոխականների պրօպագանդի շնորհիւ:

Թիօնէթի կողմերը զինւորական մեծ ուժ է ուղարկել սկսած խրովութիւնները զսպելու համար:

*

Գօրու շրջանում գլուղացիները մահաւան սպառնալիքով

ԲՆԿԶԱՐՈՒՄՆԵՐ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Գորիս, յուլիսի 20.

Անցեալ յունիսի 25-ին ցերեկով ձօն Ժամը 12-ին Սիսիանի Շաղատ գիւղացիք գուժկան են ուղարկում Մարդա գիւղի բնակիչներին ձօն և օգնութիւն խնդրում, որովհետև այդ շրջանում յայտնի աւազակապետ Մուրթուզան իր խմբով և թափառական թուրքերից ընտրած ուժերով յարձակում էր գործել և շաղատոց 105 գլուխ գոմեշներն ու կովերը բռնել (ինձ թուում է, թէ այս թիւը չափազանց քիչ է. ոմանց ասելով, տարւած է 4 գոմէշ: Ստոյգ տեղեկութիւններ այդ մասին պակասում են): Մուրադը իր խմբով տեղացիների հետ միասին շտապում է անցքի տեղը օգնութեան: Կրփուր սկսում է: Շաղատում գտնուող կողակները և կուռղ հայերի մի մասը կուռի թունդ ժամանակ թողնում են մաղբեցոց ու փախչում: Մուրադը քաջութեամբ ու անողութեամբ մաղբեցոց հետ առաջ է տանում գործը: Ամենքը հիացած պատմում են, թէ ինչպէս Մուրադը՝ «տղճը այն սպիտակ ձիւնորին նայեցէք» ասելով, ահագին տարածութիւնից գլորում է աւազակապետ Մուրթուզին: Մի ուրիշը՝ Ալիու գիւղացի Գասպարը (այժմ վերաւոր) էլի վաղորդը իմաց տալով, գլորում է Մուրթուզի մի այլ ընկերով: Միւս տղերքն էլ սատկեցնում են Մուրթուզի միւս երկու ընկերներին ևս, որից յետոյ թուրքերը դիմում են խայտառակ փախուստի: Շաղատոց հաւարից բիշ յետոյ, երբ մաղբեցիք Մուրադի հետ արդէն վտանգած շտաղկոց օգնութեան են գնացած լինում, մի այլ հաւար է գալիս Մազրա գիւղի հիւսիս-արեւմտեան կողմը գտնուող Ուսուրլուի թրքական «Իւրդ» կոչւած հանդին կից հայերի հանդից, թէ թուրքերը բռնեցին մաղբեցոց 410 գառները և 12 գլուխ եղջ: Ինչպէս վկայում է Մազրա գիւղի խաշնարածը, մի բերդ է լինում, որ գառները իբր արածացնելու նպատակով մօտեցնում է նրանց Ուսուրլուի Իւրդին, հեշտացնելով յարձակողների գործը, որոնց օգնութեամբ և բռնում է հօտը: Ինքը բերդը հովիւր մինչև այժմ էլ չկայ, չէ գալիս հայերի ձօն: Այս հաւարին վրայ են հասնում մի քանի մաղբեցիներ (մեծամասնութիւնը շաղատոց օղնութեան են գնացած լինում) և ձօն 20-ի չափ բռնանկոթիցներ, որոնց սակայն ոչինչ չի յաջողում յետ խելը:

Վուրը կատարել է դառնում: Մուրթուզի մարդիկը շաղատոց ապրանքը բռնել են սկսում դէպի Ուսուրլուի կողմերը և այդպիսով կուռղ 2 կողմերի շարքերը աւելի խտանում են: Մուրադը իր խմբով անցնում է թշնամու ետևը և սկսում ջարդը: Փախած թուրքերի օբանքը մասնւում են տղայոց ձեռքը: Կատարած մաղբեցիք չեն խնայում կանանց և երեխայոց: Ջարդը ստիկում է առաջ բերում թուրքերի մէջ: Այդ կատարել կուռում մերոնցից վերաւորում են 3 հոգի Վիրաւորածներն են. 1) մաղբեցի Կարապետ Ադամեանը՝ ալ ուսից, 2) նսն գիւղացի Մուրցի Մաթոսեանը (Միքայէլ Մատթոսեան) ձախ թշից և 3) Ալիու գիւղացի յայտնի Գասպարը ձախ ոտքից. մոսինու գնդակի վէրքեր են: Լուրջ վէրքը Գասպարինն է:

Ինչ ասել կուզէ, որ գործի տեղն է հասնում մեր մամուլի գոված գաւառապետ Աւետիսին, վրդովում է իր գաւառում կատարւած անկարգութեան լուրը աւ-

նելով, կատարում է, որ հայերը անխղճօրէն կոտորել են և ոչ կոտորել: Մազրեցոց մեղադրելով 6 հոգու բանտարկում է և գործին այն ընթացքն է տալիս, որ իբր թէ հողային վէճի արդիւնք է այդ և այլն, և հայհոյում է հայերին: Սիսիանի այդ մասում գլուխուում է և նրա՝ Աւալեանի արբանեակ, Շախսուար բէկը, մի յայտնի թուրքի փեսայ, որը ամեն կերպ գրգռում է թուրքերին հայերի դէմ զինում և պատրաստել է տալիս ընդհանուր ուժերով յարձակելու Մազրայի և շրջակայ գիւղերի վրայ: Այդ մարդը մարդիկ է ուղարկում Գարգառի հովտի թուրքերին և նրանց ուղարկութիւնը հայերի հարստութեան վրայ հրաւիրելով (որի մի մեծ մասը իբր թէ խել են և թուրք ընտանիքների վրայ ահագին չափով աւար բաժանել), կոչ է անում դրսից նոր ուժեր բերելու՝ մեծագոյն աւարառութեան համար: Չայն է ընկնում ամեն տեղ և ահա հաւաքում են նոր ուժեր: Ամոյս 1-ի գիշերը, մի թուրք պրիստաւի վկայութեամբ, (սալաւ մարդ է) Խնձորեակ գիւղի վրայով Ջիբրայէլից անցել են 80 զինւած թուրքեր: Այդ մասին տեղոյս գաւառապետին հեռագրով իմաց է տւել և Ջիբրայիլի գաւառապետը: Վերջինս երէկ առաւօտեան շատ շուտով քսանաչափ կօզակ ուղարկեց 80 զինեալ թուրքերի ետևից: Աւալեանին հեռագրով դիմում է Նախիջևանի գաւառապետին և յայտնելով այդ մասին, խնդրում է նոր ուժեր կենտրոնացնել Մազրայի շուրջը: Իսկ իր կօզակներին հրաման է գրում պատրաստ լինել և ցրել թուրքերին յարձակման ժամանակ: Մի խօսքով անուրանալի է և այն, որ մարդը միջոցներ ձեռք առաւ, գոնէ առ երեսու տեսնեք վերջը ինչ կը լինի: Թուրքերի և հայերի մէջ Սիսիանի վերոյիշեալ պաշտօնակատար Շախսուար բէկը աշխատում է հաշտութիւն գցել, աշխատելով հայերից առնել սպանւած թուրքերի արնագինը... բայց դա, Մուրադի ասելով, միայն պատրւակ է: Նա այդպիսով միջոց է գտնում բոլոր թուրքերին հաւաքելու մի տեղ և զէնք ու փամփուշտ բաժանելու: Նոր ուժեր է հաւաքում և ձայն կայ, թէ շուտով Մազրան ու շրջակայ գիւղերը կ'ենթարկւին յարձակման: Բայց «Գաշնակցութեան» կարիճներն էլ բնած չեն...

Մուրադի և ընկերների ցոյց տւած քաջութիւնը մեծ վստահութիւն է առաջ բերում տեղական ժողովուրդի մէջ՝ դէպի կազմակերպութիւնը: Ամենքը օրհնում են խմբի տղաներին: Գիւղերը պահում են նրանց աչքի լոյսի պէս:—Ներսէս վարդապետի հարցին՝ թէ ուզում ե՞ն կօզակներ ունենալ՝ գիւղացիները պատասխանում են, թէ նրանք կուզէին ունենալ 20 կօզակի տեղ՝ 3 «խմբի տղա»:

Գաւառապետ Աւալեանին մէկ գոյնի մարդ չէ: Նա անում է և այս և այն: Օրինակ, Մազրայի դէպքը նա վերագրում է հայերին, անիրաւացի կերպով և պատճառ է բռնում հողային հարցը, որ իսկի կապ չունի գործի հետ: Ճիշտ է, հողային վէճ կայ թուրքերի և մաղբեցոց մէջ, սակայն բոլորովին այդ առթիւ չէ, որ սկսւել է կռիւը: Թուրքերը յետոյ են հարցը հողային վերածել՝ իրենց արածը բողբարկելու համար: Ուրիշ փաստ: Պատահում է, որ Աւալեանի ստրաժնիկները զէնքեր են խլում հայերից և նա միջոցներ չէ ձեռք առնում դրա դէմ:

ԱՐԻԻՆՈՏ ԱՆՅՔԵՐԻ ԿԱՐԱԳԻՐԸ (Նամակ)

Հարգանքով եմ նկարագրել թիւքերի յարձակման ենթարկած հայ զիւղերի բնորոշ մի քանի դէպքերն ու իրազեկութիւնները:

1. Ե ա ը Վ ա զ ա հայկական զիւղ է և ունի 127 տուն: Կայիսի 14-ին առաւօտանոց ժամը 8-ին շրջակայ դաշտերի վրայ սկսեցին երևալ խուճք խուճք թիւքեր, որոնք հետզհետէ առաւարտնում էին: Հայերը ժողովեցին իրենց կանանց ու երեխաներին և ուղարկեցին Երևանում: Գիւղի աղայքը բաժանուէրով խմբերի, 8—10 հոգուց, բռնեցին շրջակայ դիրքերը, սրպէսզ ներս չթողնել թիւքերին: Ժամը 11-ին թիւքերն ահաւելի գուռում գոչուով, «Եւ Ալի բաժնատ», 3 կողմից զրահ աւելն զիւղի վրայ: Հայերը սկսեցին հրացան արձակել սպանեցին թիւքերից 8 հոգի: Եր հայերի հրահրութիւթը սպաւեց, այլ ևս ոչինչ չունենալով հրացաններից արձակելու, ետքը սկսեցին բարձր միտան սյուրիների միջով փախչել դէպի Երևանում: Այստեղ մի փոքրիկ զօրք էր կանգնած մի օֆիցերի հետ Ետրաշեցի խմբեցին սրանցից, մի քանի զինուոր, սրպէսզ նրանց հետ դնային վանելու թիւքերին զիւղից: Սպան մերժեց այդ, առարկելով, որ ինքը ի սուսուէր չունի, այլ պետք է դիմել զենեկաւ Ալիխանովին: Այն ժամանակ ետրաշեցի աղայքը վերցրին 5 հոգի Երևանում: 5 հոգի կաշեկերիկայի և 10 հոգի էլ իրենք, բարձր հրացաններով զինուած, դիմեցին դէպի Երվա, սրանց թիւքերը դառնում էին աներն ու դոյրը թաղանկով: Թիւքերը կարողացել էին միայն մի առն ուղիւ, երբ աղքատ վրայ հասան, բայց և այնպէս ամեն ինչ արդէն սրբել էին: Երկու կայան դէմ հասան նաև կողակները, որոնց պնտութեամբ մեր աղքատը գուրս քշեցին թիւքերին զիւղից: Թաղանկում են իսպառ 54 տուն և եկեղեցին, այստեղից յափշտակել էին Մեքսիկա Արքայ, Մեքսիկայի ու Նապոլիոնի մասնաւորները, որոնք յետոյ Շէյխու-ու-Իսլամի ջանքերով գանեցին և յանձնեցին կարապետ վարդապետին:

Սպանուած է 1 հոգի, վիրասուրած՝ 2 հոգի:
2 Թ մ բ ու է ի մէջ խառն ազգաբնակութիւն է, որից 132 տուն հայ է, 37 տուն թիւք:

Նախիջևանի կատարածից յետոյ տեղացի թիւքերը սկսեցին իրենց բնադրներն ու դոյրը ուղարկել մասակայ զիւղերը: Գիւղի ժամանակ նրանք հայերին համարում էին, ընդհանրապէս, մնալ ու միամիտ լինել սրովհետև, եթէ նոյնիսկ ուրիշ տեղերում հայերի կատարած տեղի ունենայ, իրենք չեն թոյլ տայ թմբուլում:

Կայիսի 15-ին, առաւ անան հայերը լեցին յանկարծակի հրացանի ձայնով խանի աշտարակից, սր եղաւ ազդանշան ընդհանուր հրացանաձգութեան համար: Թիւքերը սկսեցին բարձր կողմերից կրակել և յարձակումներ գործել հայ աների վրայ: Հայերը փախան այս ու այն կողմ, կենդրնայան մի քանի մեծ աներում, որոնք իբրև դիրքեր էին ծառայում պաշտպանութեան համար: Հայերն էլ սկսեցին կրակել թիւքերի վրայ: Հրացանները պիտանի էին և ցնում էին վաւագով: Թիւքերից շատերը ձեռքերին բռնած ունեին յախափելներ, նաւթի մէջ թաթախած, նրանք վառում էին այդ յախափելները և դոյրում աների ասկ, սրպէսզ հրէհներ հաճախում էին զարգանալով թեան միջոցին մեղքն բարձրաձայն Ղուրան էր կարգում: Իսկ խուճանն աղաղակում էր «Եւ Ալի, ջարդեցէք անհասարակներն»: Այս բարձր հոգերով մեղ պետք է պատանեն, գա սուսական չէ, այլ մերը, պարսկական... Թիւքերը շատ լաւ յարմար գիրքեր գրաւած ունեին, իսկ հայերը կանգնած էին ցածր դիրքերի վրայ, սուսի թիւքերի համար շատ դիրքին էր կրակել հայերի վրայ: Թիւքերը զինուած էին բերդանի ու մագաղանի հրացաններով: Հրացանաձգութիւնը շարունակեց մտատարապէս 6 և կէս ժամ: Ու դադարեց միայն այն ժամանակ, երբ Նախիջևանից օգնուած 37 հրէհ-հայերից մի քանիսր ջուր չունենալով, կրակը հանդիմանում էին կարասից վերցրած զինով:

Սպանուած են 20 հոգի, վիրասուրած 9 հոգի:
Այժմ դառնանք այն զիւղերին, որոնք թէև ենթարկւել

են յարձակումների, բայց յետ են մղել և համեմատաբար քիչ վնասներ են կրել:

3. Ե ը ի մ ա մ ու լ ա — հայաբնակ, բաղկացած 124 տնից, թիւքերը յարձակւել են մայիսի 10-ին հոտի ու տուարի վրայ ու քշել սարել են: Հայերը դիմագրել են ու կարողացել են թաղանկում առաւարի մի մասը միայն յետ խլել Բուրք շրջակայ զիւղերի մէջ Երևանում: Եր, որ իւր հայ բնակիչներով ոչ միայն կարողացաւ դիմագրել և թոյլ չտուր, որ թիւքերը իրենց վրայ յարձակւեն, այլ և դարձաւ մի կենտրոն, որտեղ շրջակայ հայ ստպատակած զիւղերի ժողովուրդը ապաստան էր գտնում: Երևանում հայ աղայքը նոյնիսկ երբեմն գնում էին ուրիշ հարևան զիւղերին օգնութիւն հասցնելու թիւքերի դէմ կուսելով, ինչպէս րինով Կամարազ դիւղից, Կարապի հայերին:

Երևանում հաւաքւել էին հետևալ հայ զիւղերից փախտակները — Ալերին Ուղու Օ պիցի — 250 հոգի, Գիւղաւորից — 48, Նաղարաբաթից — 500, Ջահաւից (Ջահաւից) — 930, Խալիսայից — 450, Կարապից — 360, Կամարազ-Գիւղից — 6¹⁾ հոգի, այսքան մարդ կային յիշեալ զիւղում յանկի սկզբներին: Բայց մինչև յանկի սկզբները հաւաքւած են եղել և արդէն վերագործան կրկին իրենց զիւղերը, հայեր Ետրաշեցից, Գիւղ-բէկ-գիւղից, Քարաբէկ-գիւղից: Մինչև ըս էլ ստիպան շատերը չեն ցրւել և շարունակում են մնալ Երևանում:

Չեղ յայտնի է, որ Նախիջևանի կատարածից յետոյ երկու ազգութիւնների տեղական հոգի սր պետերը, բնկերակցութեամբ մի քանի պատուար աշխարհական անձերի, շրջակայում էին գտնուում, երկու ժողովուրդներին խաղաղացնելու, բարբառում կրքերը հանդատացնելու համար: Հայերի կողմից երևանի թեմական առաջնորդ Կարապետ վարդապետն էր, իսկ թիւքերի կողմից Շէյխու-ու-Իսլամը և Նախիջևանի Բահիմ խանը, յայտնի զեկապար ներկայ թիւք-հայկական ընդհանուր էր: Երբ յիշեալ անձինք եկել էին Երևանում, ուր այնքան հայեր էին ժողոված և ուր նրանք գէնքը ձեռնին դիմագրում էին և մի քանի անգամ էլ թիւքը խուճանելու դատեր էին աւել, ահա այդ անձերը սկսեցին քարոզել խաղաղութիւն և այլ այսպիսի զեղեցիկ բաներ: Հաս բնորոշ էին Շէյխու-ու-Իսլամի և Բահիմ խանի խօսքերը, որոնցով նրանք դիմում էին հայերին: Այդ խօսքերը մեղ պարզ ցոյց են տալիս, թէ ինչ փանդուար ու փորձեցիութեամբ տողորած հարևանների հետ մենք գործ ունենք այսօր ..

Շէյխու-ու-Իսլամը խոսում էր խաղաղութեան, համերաշխութեան մասին, երկու հարևան ժողովուրդների միաբանութեան անհրաժեշտութեան մասին, «կողայրներ, ատամ էր նա, Բաւաւած երբեմն մարդկանց վրայ ուղարկում է զանազան պատուհաններ՝ կարիւսա կամ մարել, կամ խ լքա, կամ ժանտախտ և այլ ամեն անասկ չար պատիժներ, այս կատուածը ձեր մէջ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անասկ հիւանդութիւն, որը գուր համբերութեամբ պետք է տա այժմն տանէք: Ե՛ք որ ձեր Բաւաւարանի մէջ աւաւած է, եթէ զարկեն քեզ մի ապական, երևալով միտ կողմն էլ դէմ արա թշնամագ: Այստեղ, այս մեր դժգոհութիւնների մէջ Շէյխու-ու-Իսլամն է մեղաւոր, անիծեցէք բոլորը նրան»: ... Ըմենքը անհրաժեշտ է Շէյխու-ու-Իսլամի խօսքն էլ շատ լաւ գիտեք, որ այդ անիծքներից Շէյխու-ու-Իսլամը չէ փախնայ և միշտ էլ կը պահպանէ իւր զոյրութիւնը, այստեղ ու այնտեղ անգաղար կախներ տաւ ընկրւով հայերի և թիւքերի միջև ...

Այսուհետև խոսում է Բահիմ խանը՝ Նախիջևանի քաղաքացի իր եղբայրը: «Հայ եղբայրներ, գուր զիտեք, որ քանի դուր է մենք ձեզ հետ ապրում էինք իբրև լաւ հարևաններ այդպէս է թէ ոչ: Գուր զիտեք, որ յրեթոյս այդ դարերի ոչ մենք ենք ձեզ բաւաւած մայրին և ոչ էլ գուր մերին: Այսպէս է թէ ոչ, ապա թէ մեկը համարձակուի ու չտանջու: Ես խաղաղուտեք մարդ եմ, ձեր ապրանքն ու դոյրը թաղանկում է թիւքերի ձեռքով, բայց ես ձեզ խոտանում եմ յետ դարձնել բարձր մինչև վերջին տակը, երբ կը գոյ այս կողմերը նշանակում գեներալ Ալիխանով, որ իմ փեսան է: Իմ խաղաղուտեք մարդ լինելու կարողացանք ձեզ հետ եւ փաստելով մայիսի 13-ին 5¹⁾ հոգի քիւրդեր անցան Արաքսի, յափշտակեցին Կարապետ-Երևանի զիւղայրներից տաւարը, ես, իմանալով այդ, իսկոյն և եթ հասայ տեղ և բար-

ծրոյնելով միայն իմ յուշամաստ, թափահարեցի նրանց վրայ և հրամայեցի իսրայն հեռանալ: Թիւրքերը իսրայն հնազանդեցին ինձ և խնամարհւելով անցան միւս ափը: Այդ ինչպէս է բաժնի խնամը կարողանում է միանգամայն օտար, միւս ափից եկած քիւրդերին մի մտաի թափահարումով հեռացնել, իսկ իրեն հրատակ հատիկներն թիւրքերի վրայ սչ սք մի մտա չի բարձրացնում...

4. Բ ա գ ա մ Լ Ս Ա: Մայիսի 14-ին թիւրքերը շրջապատեցին դիւղը շար կողմից: Հայերն ունէին 4 բերդոտի հրատաններ, տարձանակներ, բայց սչ չգիտէր արձակել: Թիւրքերն առաջարկեցին իրամուծիւն ընդունել: Միւս օրն առաւօտեան թիւրքերն եկան աւելի մեծ ամբողջով կողին շրջապատեցին և նոյն պահանջները դրին: Հայերը ճարտահատար, Չ հայ թիւրքաւեր ազդեցիկ բնասնիքների ճնշման տակ տալիս են իրենց յ. ժարուծիւնը և ներս են թողնում թիւրքերին գիւղ: Ժարուծի հետ էր քահանան: Թիւրքերը բերել էին իրենց հետ Չ ստփրիչ ու սկոպին անյապող բարձր հայ գիւղացիներին, նոյն իսկ քահանային ստփրիչ: Թիւրքերը կանգնած էին իւրաքանչիւր հայի մտ հրացանը ձեռքին և սպասում էին հակառակորդներն սեղն ու սեղը սպանել: Քաղբին ստփրեցին, իսկ երեխաներին թրջպատեցին: Հայ կանանց հրամայեցին հանել «չեկատանր» ու «շապր» զյեղ վրաները: Ատատրեցին մի քանի «քէրի» Եկեղեցին մզկիթի փոխեցին:

Մայիսի 27-ին այս դեպքն եկան գեներալ Ալեխանովը, Երևանի փոխահանգապետը և Արարպետ վարդապետը: Այնտեղ գեղապիք յայտարարեցին, որ իրենց բանի են իրամուտքել, ուստի բարբերեան, բայց վերայիշեալ երկու թրքաւեր բնասնիքներից, կրկին դարձան քրիստոնէա թեւան:

Թիւրքերը վեժ հանելու համար յարձակումներ դարձեցին նաև մայիսի 30—31 և յուլիսի 1-ին: Միշտ յետ էին մըսում գիւղե մէջ պահակ դրած սուս զինւորներից: Թաւառեցին սուսարք:

Թալանած սպրանքի վնասն է մտա 3,630 ռուբլի:

Յ Ա Ր Ի Ձ Ս Ի Ո Ճ Ի Ր Ն Ե Ր Ը

(ԹԳԹԱԿՑՈՒԹԻՒՆ)

Ստալբուրգ, 10 յունիսի

Ռուսական բռնապետութիւնը իր ցանած սերմերի պտուղները սկսել է վայելել: Սակայն այդ պտուղները նրա քիմքը չեն քաղցրացնում, և այդ պատճառով այժմ նա այլևայլ միջոցների է դիմում՝ դրանց դառնութիւնից ազատելու համար:

Անգրկովկասեան թիւրքերին իր ձեռքում գործիք դարձնելու նպատակով և վստահ, որ այդ տարրը հաւատարիմ հպատակ է բունութեան դահին, ցարի կովկասեան սպասաւորները ոչ մի միջոց չեն այնքան նրանց հայերի դէմ լարելու. կառավարութիւնը իր ձեռքով զինեց մահաձեռականներին: Աովկասեան կարճատես, բթամիտ կառավարիչները չկարողացան նկատել, որ Ռուսաստանի հմայքը արևելքում՝ ներկայ պատերազմի պատճառով այնքան ընկել է, որ թիւրք ժողովուրդն էլ է սկսել նրան արհամարհել և խաւար թիւրք ամբոխի ուղեղի մէջ փորձում են յարուծիւն առնել մտքեր՝ կովկասեան թրքաբնակ նահանգների վրայ կրկին ծածանեցնելու մահաձեռական բռնապետութեան դրօշը: Արօնական մոլեռանդութիւնը և թրքական սխալ հասկացած հայրենասիրութիւնը սրանից աւելի բան չէր կարող ստեղծել: Խուժանի արիւնածարաւ բնազդը զարթել է, աւարաւութեան տենչը թեւեր է ստացել կոյր կառավարութեան աջակցութիւնից: Դրանից շատ ճարպիկ կերպով օգտուեցին համիսլամութեան գործակալները և դանազան մուխ գործիչներ: Եւ իբրև հետևանք դրանց պրօպագանդի՝ այժմ շարժումը մահաձեռական ցեղերի ապրստավորութեան կերպարանք է ստանում: Առաւփարութիւնը

այժմ միայն նկատում է, որ վտանգաւոր խաղ է սկսել, որ կայծը կարող է հրդեհ դառնալ, և ահա թէ ինչո՞ւ ուսուաց զօրքերը այժմ մահաձեռական խմբերի դէմ են դուրս գալիս: Յարի գործակալները այժմ հանգցնել են ուզում այն հրդեհը, որ իրենք բորբոքեցին:

Նոյնանման մի բան կատարեց յունիսի 7-ին հիւսիսային Աովկասի Ստալբուրգ քաղաքում: Այդ քաղաքը թեմական եպիսկոպոսի աթոռանիստ է և նրա առանձնայատկութիւնը այն է, որ փողոցները վնտում են քահանաներով: Աղբը տիրում է ժողովրդի մտքին ու սրտին: Այդ կողմից Ստալբուրգը երևի առաջնակարգ շքանշաններից մէկին է արժանի: Դրա ապացոյցն է հետևեալ փաստը: Չնայած ներկայ տագնապալի ժամանակներին, չնայած նրան, որ ամենուրեք մարդիկ զբաղւած են այն հարցով, թէ ի՞նչ միջոցներ ձեռք առնեն, որպէս զի շուտով հրաւիրւի Հիմնադիր ժողովը, երկիրը ազատութեան կառութիւնից և արիւնահեղ պատերազմին վերջ տրւի, չնայած այս բոլորին, ասում ենք, ուսու հոգևորականութիւնը այստեղ զբաղւած է հրէշաւոր գործով: Ստալբուրգի մի եկեղեցում կրօնական հրապարակային վիճաբանութիւն էր կազմել՝ հնադաւանների (ստալբուրգ) հետ: Վիճաբանութեան ընթացքում, փոխադարձ քննադատութիւնների ժամանակ, մի հնադաւանի միջև այլոց ասում է. «Դուք կուռքերին էք երկրպագում», այդ խօսքը շուտով շուռ են տալիս և տարածում, թէ հնադաւանը ասաց՝ «Դուք սատանաներին էք երկրպագում»: Եւ ահա սկսեց ամբոխի յուզումները. նա ուզեց իր ձեռքով դատաստան տեսնել հնադաւանների գլխին: Վրայ հասաւ ոստիկանութիւնը, որը հազիւ ազատեց դժբախտներին, ամբոխին եկեղեցուց դուրս արեց, ներսում, միայն հնադաւաններին պահելով, ամբոխի գաղանութիւնից ազատ պահելու համար: Քանի դեռ ամբոխը քիչ էր, ոստիկանութիւնը եռանդուն միջոցներ ձեռք չ'առաւ նրան ցրելու. իսկ երբ նա հասաւ հաղարների՝ ստիպուեցին զօրք կանչել: Չօրքը սովորական նախազգուշութիւնները արեց, բայց ամբոխը չցրեց: Եւ ահա կատարեց մինը այն հարիւրաւոր դէպքերից, որոնց նմանը շատ է տեսել Ռուսաստանը, բայց էլի խելքի չի գալիս: Հարիւրաւոր սպանածներ և վիրաւորներ: Ատաղած ամբոխը չչիտէ, թէ ո՞ւմ վրայ թափ է իր թոյնը — նա մէկ վազում է դէպի ոստիկանապետի տունը, մէկ՝ դէպի նահանգապետի տունը, նրանց համարելով յանցաւոր, բայց նրանց դռները պահպանում են զինւորներ: Իսկ միւս կողմից բժիշկների դռները, հիւանդանոցները, դեղատները ցեղեցին վիրաւորաւորներով: Թափաւ գիակներին մօտենալ չի լինում: Չինւորները թող չեն տալիս: Ամբոխը հայհոյում է զօրքերին և ոստիկանութեան, մոնչալով՝ այս ու այն կողմն է վազում, բայց ձեռքին հնար չ'ունի: Ողորմելի, խաւար մասսա, որ եռանդունի, ցաւող սիրտ ունի, բայց բթացած ուղեղ և կոյր աչքեր ու չգիտէ ո՞ւր է իսկական յանցաւորը, ո՞ւր դիմել, ո՞ւմ պատժել իր կարծիքով նա լաւ գործ է կատարում, որովհետև ուզում է հնադաւաններին, ուղղափառ եկեղեցին անպատուողներին պատժել. չէ՞ որ նրան շարունակ այդպէս են քարոզել իսկ միւս կողմից նա ապշած է՝ ինչու են հրացաններ արձակում իր վրայ:

Ոճրագործ կառավարութիւն. նա բթացրեց, անասնական վիճակի հասցրեց ամբոխին՝ իր տւած հրահանգները կատարելու համար:

Մ Ի Թ Ռ Ո Ւ Յ Ի Կ

Հ. Յ. Գաշնակցութեան Օգեստայի Կոմիտէն հրատարակել է, հայերէն և ռուսերէն լեզուներով մի թուղթիկ, ուր ի միջի այլոց կարդում ենք.

»Ձգալով իր մօտալուստ վախճանը և անկարող լինելով խուսափել ժողովրդական դատից միմիայն կնուտի, սէինների ու բանտերի օգնութեամբ՝ ցարիզմը կազմակերպում է երկրի խաւար տարրերը, իր ձեռքում գործիք դարձնելու համար: Եւ ահա անօրինականութեան և ճորտութեան միջնորդութեամբ անուցած՝ այդ անգիտակից, խաւար ուժերը օգնութեան են վազում մեռնող ուժեղի մին: Առուած կոյր, մոլեռանդ ատելութեամբ դէպի բոլոր գաղափարական կուռղները՝ «մահ ինտելիգենցիային», «մահ հրէաներին, մահ հայերին» աղաղակելով—որպէս Կիշինեի մարդասպանները, Կուրսկի խուլիգանները և Քազէի թիւրքերը—նրանք շտապում են դէպի արևունայի հանդէսը, դէպի անսանձ կրքերի վայրենի օրհան... Եւ նրանց առաջից, հարթելով նրանց համար մարդասպանութեան ու կողոպուտի ճանապարհը, գնում են նրանց ղեկավար արքայական մանկլաւիկները... Գրանցից էր Քազէի մարդասպան-նահանգապետ Նակաշինէն, որ արժանացաւ յիշափոխականի վրէժխնդիր հարուածին...»

Թ Ե Ր Թ Օ Ն

ՕՏԱՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐԻ ՏԱԿ

ԱՆՋՈՒԳԱԿԱՆ ԲՐԻՍՍԱՓՈՐԻՆ

Եւ կարաւանը կանգ առաւ յոգնած...

Օտար ու հեռաւոր հորիզոնների տակ մի գերեզման կայ, մի մռայլ ու անլարի գերեզման, որ հայրական խնամքով ու քնքշութեամբ սլվում է իր կողքին մի ուրիշը՝ մի նոյնպէս անլարի, նոյնպէս մռայլ գերեզման. և նրանց վրայ ուշ գիշերներին պլպլան աստղերը սիրում են երազել աշխարհի իրերը, մեղմ փսիսուկով իրար են յայտնում մի խորին գաղտնիք, ապա թախծապատ ու դառուկ դէմքով սահում, անցնում են դէպի արևմուտք: Բունակեր ու այրի թուշունը մոլար, անիծելով իր թողած վայրերը, հասնում է այնտեղ, պլտոյտ է անում լուիկ դամբարանի վրայ, մի յետին ցաւոտ երգ է հեծեծում և անցնում է գնում տանելով իր հետ էլի մի նոր վիշտ, աւելի խորունկ, աւելի կիզել: Եւ մի գծախտ երկրից բոլոր լալիկան հովերն այստեղ են փչում միահամուռ սոյլով, երբ բեռնաւորւած են ցաւ ու արցունքով, երբ բոթեր ունին կամ խոր հառաչանք, երբ զայրոյթ ունին կամ ծով հեծեծանք, երբ արտունջ ունին կամ անզուսպ բողբ:

Կարաւանը յոգնած՝ այնտեղ կանգ առաւ:

Նրանք եկել էին հովերի յետևից բայլ առ քայլ գանդալ ու յոգնած. եկել էին փոշոտ, անվերջ ու մոլոր ճանապարհներիով, կուցած իրանց տառապանքի բեռի տակ, առանց տնքոցի, առանց արտունջի, առանց փսոսանքի, որպէս ուխտաւորներ, որպէս փրկութեան համր նոխալներ: Եւ բայլել էին գիշեր ու ցերեկ, տը-

րորւած կրունկներով, աչքերը դէպի հեռուն միշտ հեռուն, դէպի այն օտար հորիզոնները, ուր մա մի օր իր կորիւնի հետ պառկեց հսկայի քնով, այլ ևս երբէք չը վերկենալու համար, ուր հզոր գլուխը յոգնած ու տառապալից, մի օր, մի անէծքի օր, կախեց լայն կրծքին, այլ ևս երբէք վեր չը բարձրանալու համար:

Հովերի պէս բեռնաւորւած, հովերի պէս անհասգիստ ու սգուր, նրանք գալիս էին այն սևաւոր երկրից, ուր ժպիտը յանցանք է, ու արցունքը՝ ծով, ուր կեանքը՝ անէծք է, և մահը փրկիչ, ուր հառաչանքից երկինքն է այրւած, և հողը տնքում է ցաւերի բուսից: Եւ հովերի հետ անցել էին ծովեր ու գետեր, օտի տակ տւել լեռներ ու ձորեր, բողբը՝ շրթներին, կակիծը՝ սրտներին, անցել էին ու եկել դէպի մենաւոր գերեզմանը: Կհան, եկան ու շարան-շարան կանգ առան այնտեղ, ուր հովերը մրդկուում էին, գալարում, ունում:

Եւ կանգ առաւ ծերունին, ձերմակ միրուքն ու արքները հովերին դէմ տւած, և իր լայն կրծքից հառաչանք հանեց, գետին զարկեց մաշած գաւապանը, և հողը դրնդաց նրա հարածից: Նրա հետ մեկտեղ կանգ առան բոլոր նրանք՝ որոնք եկել էին լեռներից ու ձորերից, այրերից ու մութ անտառներից, դաշտերից ու աւերակներից, բոլոր նրանք՝ որոնք եկել էին իրենց կրծքի տակ կուռուած ցաւը թափելու, իրենց հոգին աղմկող մեծ բանն ասելու, սրտի ահագին բեւը վար դնելու: այրիների, որբերի, ծերերի, տառապողների վշտոտ կարաւանը կանգ առաւ:

»Գու այստեղ ևս քնած, բո կորիւնի հետ, ով մարգարէ, նահատակ, առաքեալ, ասաց ծերունին, այստեղ՝ օտար հորիզոնների, օտար երկնքի տակ: Մենք երկաթ ոտնաման հագած, երկաթ դաւաղան ձեռք առած, հովերի հետ մեկ տեղ քեղ փնտրել ենք երկրէ երկիր, սարից սար, ձորից ձոր: Մենք եկել ենք բոլոր նրանց կողմից, որոնք լալ են ուղում, բայց արցունք չ'ունին, հառաչանք ունին, բայց կրծքերն է փլած, սև կակիծ ունին, առանց սփոփանքի, գանգատներ ունին, որոնց սիրտ չի գիմանայ, և աչքերին անթարթ նայում են հեռուն, հատուցման, ու վրէժի սասանեցնող ու ահաւոր օրին են սպասում: Գալիս ենք բոլոր նրանց կողմից, որոնք հոգին մետաղի պէս կարծրացել է արհաւիրքի ու տանջանքի մէջ, բայց էլ տոկայու, լուելու, համբերելու կարողութիւն չ'ունին, և երպարում են հատուցման հըրաշալի օրը: Եւ դու քնած ես, զարհուրելի է...»

»Արդար վրէժի կարմիր ժամը դարբնող դու հսկայ վարպետ, ինչ եղաւ քեզ, երկինքն էր անողորմ, որ շուտ քրկեց քեզ թէ երկինքը, որ փակեց աչքերդ: հազար ու հազար միթագնած աչքեր օր ու գիշեր նայում էին հեռուն, դէպի սև հորիզոնը, սպասելով ատելութեամբ ու վրէժով զանգւած հսկայական փոթորկին, որ քո ձեռքով չիթայաղեմ՝ վերջապէս պիտի պոթկար մեր սևաւոր երկրի վրայ, սրբելու համար բոլոր արցունքները, բոլոր անիրաւութիւնները, բոլոր գարշանքը, ամոքելու բոլոր այրւած սրտերը, փշեղու բոլոր ժանգոտ շլթաները: Եւ դու քնած ես... զարհուրելի է...»

»Օ՛, այդ հատուցման սքանչելի օրը... Կնուռ ուշացաւ նրա համար մեր մեռելները թանձր հողի տակ հեռում էին անհամբերութիւնից, մեր լեռներն ու ձորերը մնջել էին ահաւոր գաղանիքին իրողեկ մահաւերձ հիւանդները անվերջ հոգեվարքով, օրերով պայ-

բարում էին մահան դէմ, որ մեռնելուց առաջ այն գու-
 փոթորկի կայծակի փայլը մի յետին անգամ շողողայ
 նրանց աչքերում և մարդակեր ճիւղի վերջին զուգը
 հառաչանքը նրանց ականջների մէջ մարի: Եւ մանուկ-
 ներն օրորոցի մէջ և ծերերը գերեզմանի հողածրի
 վրայ իրենց գաւազանին յենած՝ նայում էին այն կողմը,
 որտեղից պիտի ծագէր փոթորկածին արշալոյսն ահա-
 գին: Եւ դու քնած ես... խորունկ, անդորր քնով:

»Ինչ եղաւ քեզ, ո՞վ դու սրտերի և կամքերի հրա-
 շալի հովիւ, արիւննոտ մրրիկների հզօր ու ըմբոստ
 վարիչ, ո՞վ տեց քեզ այդ ճակատագրական քունը,
 այսքան խորը և այսպէս երկար: Չը գիտես արդեօք,
 որ հազար ու հազար հոգիների մէջ հաւատն է լալիս
 այրի ու սպառու, հազար ու հազար սրտերի մէջ ծլած
 յոյր կենսատու շողերին կարօտ՝ մեղմիւ հեծեծում է
 սև խաւարում. փոթորիկն եկաւ՝ սև ամպերը չը ցրեց,
 կայծակը շանթեց՝ ու խոտոր անցաւ: Եւ դու քնեցիր,
 երբ այնքան հոգիներ երազում էին քո մեծ և ահա-
 տար ու սքանչելի երազը...»

»Չէ՞ մեր լեռներում հրէջը մնաց կանգուն ու սպառ-
 նալի. հազար գլխանի արիւնարբու հրէջը, որ մեր հո-
 գիներն է քաղում, մեր արիւնը ծծում, մեր սիրտը քա-
 մում. մենք երկուսը, մրկում ենք նրա բոց շնչի տակ:
 Տես, քեզ բերել եմ ես նմուշները սարսափի, ցաւի,
 կակիծի, լացի. սրանք ամենքը ասելիք ունին, սրանք ա-
 մենքը դանգատ են եկել զարթիւր ու ասա, մեր ծով
 ցաւերի վախճանն ո՞ւր է, ասա՞ ո՞վ է անիծել մեզ և
 ինչո՞ւ: Նայի՛ր մեզ վրայ գէթ մի անգամ, ո՞վ մեծ, ո՞վ
 ըմբոստ հոգի, և երբ նայես, գիտեմ, քո հսկայ սիրտը
 էլ տոկալ չի կարող էլ քնել չի կարող և դու վեր կը
 ցցւի քո բոլոր վեհուածեանք, այն բաց ու հպարտ ճա-
 կատով, որ բոլոր դժբաղդներն ու պայքարողներ երա-
 ղեցին, այն հրաշագեղ աչքերովդ, որոնց տակ ներա-
 կան ու փրկարար կայծակն էր մտում, այն սքանչելի
 նայածքովդ, որից հաւատն էր կաթկթում բալկամի պէս՝
 աւեր ու վշտոտ հոգիների վրայ, այն լայն կրծքովդ, որ
 հզօր կաղնու պէս փոթորիկների տակ երբէք չը տնքաց
 և որի վրայ բաղդի բոլոր խորթ զաւակները գլուխ դը-
 նելու տեղ ունէին:

»Չարթի՛ր ու վերկաց. ո՞ր անսիրտ հողը կարող է կաշ-
 կանդել քեզ իր խոնաւ ծոցում, երբ մենք տառապում
 ենք անլուր ցաւերով, երբ մեր հեծեծանքն ու աղա-
 ղակն անսիրտ երկնքի երեսն են մրկում. չէ՞ դու մեզ
 համար, միայն մեզ համար ծնար, ապրեցիր, մեզ համար
 տարար պայքար, տանջանք և մեր փրկութեան օրը ե-
 րայեցիր. չէ՞ քո պայծառ ճակատը մեզ համար կնճուկեց
 և քո աչքերը մեզ համար լացին: Ո՞ւր է այնքան լայն-
 արձակ շերիմ, որ քո զայրոյթն ու կակիծը պարտկել
 կարողանայ, երբ քո երազներից ամենից վսեմը, ամենից
 ըմբոստն ու ահաւորը դեռ երազ մնաց. այն՝ որ կայ-
 ծակների մէջ էր փթթել փոթորկոտ գիշերներին և քո
 մեծ հոգին յուզում էր, աղմկում միայնութեանդ թախ-
 ծոտ ժամերին, այն՝ որի համար մենք օր ու գիշեր ծըն-
 կաչք օրհնում էինք քո ուղին, մեր շրթունքները կըր-
 ծոտում, մեր միսը քրքրում ու արիւննոտում, որ համր
 կտրեք ժայռերի պէս, ձայն չը հանենք, չը փսփսանք,
 իրար չը նայենք, հայեացքներս կախենք, լռենք, լռենք
 ու համբերենք, մինչև պայթի քո հզօր ձայնը, մինչև
 կտարաւի քո կարմիր ուխտը, մեր բոլորի ուխտը, մինչև

փայլատակի կարմիր արշալոյսը մեր յորձած և մարած
 բիւբերի վրայ:

Եւ այն երազը դեռ երազ մնաց, իսկ դու քնած ես...
 ո՞ր չար ասուածը թափեց քեզ վրայ այս խորունկ բունը:

»Գէ՛հ, շարժելը ու վերկաց, ցնցիր ու թափ տուր
 այդ հողակոյտը, կանգնիր մրրկոտ հովերի առաջ, որոնք
 մռնչում են մեր աշխարհի գլխին: Մի կոյր դիպածն
 ինչպէ՞ս կարող է այդքան հոյակապ կեանքը սպառել,
 այդքան մեծ հոգու ներկական հրեհի բոցերը մարել
 այդ հզօր մտքիդ թռիչքը սանձել, այլ ևս երբէք չը
 թողնելու համար: Շարժելի ու վեր կաց, այդ մենք ենք
 ասում, մենք՝ որ գուրգուրեցինք քեզ մեր հոգիների մէջ,
 մենք՝ որ հազար ու հազար մեռելներ ունինք վրէժի
 ծարաւ, մենք՝ որ յոգնած ենք գերեզման փորելով,
 օ՛ զարթի՛ր, զարթի՛ր, զարթի՛ր ու վերկաց...»

Գերեզմանն անշարժ է, հողածուրը համր և նրա
 վրայ բուսած խոտերը օրորում են իրենց գլուխները
 անյոյս ցաւով, անկարելի, անդառնալի լուռ շեշտով:
 Եւ արցունքի կաթիլները ուռած ու խոշոր ցայտում
 են ծերունու աչքերից, կնճոտտ այտերի վրայից վար
 գլուխում, իջնում, իջնում, թրջում՝ ալեղարդ միրուքը և
 կաթիլ կաթիլ շաղում գերեզմանի վրայ: Եւ նրա հետ
 մէկտեղ իր վշտոտ հօտը հեծեծում է ու լալիս և
 թափւած արցունքից հողածուրը թրջում է, բլբլբ-
 ւում, եռում:

Արցունքը թափւեց և հողը թրջւեց, արցունքի ցա-
 ւից՝ շերիմը խօսեց.

»Գիտե՛մ, գիտե՛մ, բոլորը գիտե՛մ... փոթորիկը պայ-
 թեց, սև ամպը մնաց, կայծակը շանթեց ու խոտոր ան-
 ցաւ: Տէ՛ք, տէ՛ք ինձ ձեր բոլոր բեռը, բարդ բարդ
 արեցէ՛ք այս կրծքիս վրայ, և առանց արցունքի ու
 յուսահատութեան, վերստին յետ դարձէ՛ք. այնտեղ,
 լեռների վրայ թառած արծիւներ կան, որ բոլոր շան-
 թերի գողտնիքը գիտեն, դէպի լեռները, դէպի լեռ-
 ները հայրենի... փոթորիկն այնտեղ է, և նա կը պայ-
 թի ահագին որոտով երկնքի վրայ սև ամպ չի մնայ,
 կայծակն այնտեղ է, նա կը շանթի ու էլ խոտոր չի
 անցնի:

Դէպի լեռները, դէպի արծիւները, իսկ ես...
 օ օ՛ֆ...»

Լուռ գիշերներին ուշացած աստղերը դարձեալ գա-
 լիս են երազելու մենաւոր դամբարանի վրայ ու լա-
 լիս են անհունութեան մէջ բունաւեր, այրի թռչունը
 մոլոր այնտեղ է հեծեծում իր ցաւի երգը, և դժբախտ
 երկրի հովերն անհանգիստ նրան են պատում իրենց
 տեսածները:

Եւ գերեզմանը լուռ երազում է աստղերի, ամպերի
 և հովերի հետ իր մեծ, իր սքանչելի երազը...

Եւ հեռո՞ւ, հեռո՞ւ լեռներում թուխ ամպերը բարդ
 բարդ դիպում են, հա դիպում. ճայթի՛ր, ճայթի՛ր
 փոթորիկ...

Ղ Ա Ր Ի Բ

ՄԱՄՈՒԼԸ Կ. ՊՈՒՍԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԻ ՄՍՍԻՆ

Die Zeit գրում է «Հիւանդ մարդը՝ խորագրով յօդ-
 ածի մէջ.
 Մեծ «Տիւանդ մարդու» հանդէպ՝ գրեթէ մոռացել էին

վազրիկին Լարիալոր էր ուժանակային մի պայծառն, որ պէտքի մէջ նորից յիշէինք նրա գոյութեան մասին: Ա. Պօլսոն սարսնութեան փորձ արեց սուլթանի դէմ և դա նոյնքան քիչ էր զարմացնում մեզ, որքան քիչ կը գարմացնէր: Եթէ յեղափոխականի ձեռքը ուղղուէր ցանկի դէմ: Այն ժամանակից, երբ գտնուէր Լարիալորի և նրբ քաղաքակիրթ մարդը չէ կարող սպրել առանց բնական աքաղաքութիւնների, ինչպէս առանց լյսի և օդի,—այն ժամանակից ի վեր բռնապետութեան երկու միայնակ ներկայացուցիչները տրամաբանօրէն ամենից աւելի յաճախ ենթակայ են այդպիսի պատահարներին: Ինչպէս որ Նիկոլա Բ. Պետերսօնի դիտարկի մէջ ստեղծում է իր սեփական ստեղծումը, նոյնպէս և Ա. Պօլսոն համարում է ամեն մի բարձր անմասնաշարժ իր պարտութեամբ: Կերպարները գտնուում են այնպիսի կարծում է թուանաօրեամբ: Իր բարեկամներին չէ վստահում—նա նրանց կարծում է կաշտուած... Արիւնը որ նա հասցրել էր սպանում է խնդրել նրան և անգամ Բոսֆորից փառք իրիկան անուշ քամին պատմում է նրան բռնաբարութեան և սպանութիւնների մասին... Հասնական է, որ ատենատախից յետոյ զգուշութեան միջոցները կըլլան քետիւնում աւելի ևս պիտի ուժեղացան: Տնարաւոր է, որ սուլթանը, գլխաւոր նպատակ ունենալով իր սեփական կեանքի պահպանումը, աջակց էր կրկնում խոյս տալ ատենատախից, սակայն ստոյգ է, որ յեղափոխական շարժումը ճաշկատումում չէր գաղաղացել... Սուլթանը անկարող է արգելել իրերի ընթացքը, արատագրութեան մտայնող շունչը:

Մարտի 16 Le Semaphore թերթի իրազեկ թղթակիցը ի միջի այլոց հետեւեալն է գրում Ա. Պօլսից.

Կասկածները կարող են ընկնել երեք տարրերի վրայ,— թիւրք բարենորոգիչների, հայկական կոմիտէների և մակեդոնական ներքին կոմիտէի վրայ: Հայերը և բուլղարները փորձեա՞ծ մարտիկ են ուժերի գործածութեան մէջ. հայերը սպառնցել են այդ 1896 թվին, երբ նրանք օր ցերեկով գրակցին Քոստանուպոլ, որ նրանք օգը պիտի ցնդեցնէին, եթէ անարգանքի կերպով չը նահատակէր իրենց պարագլուխը: Ինչ վերաբերում է երիտասարդ թիւրքերին, նրանք անբնութանակ են թուում բարենորոգիչ և գործարկելու մի փորձ սուլթանի կամ դժոխային մեքենայի միջոցով:

Ա Մ Ս Ա Լ Ո Ւ Ր Ե Ր

Frankfurter Zeitung-ին գրում են Զմիւռնիայից, 16 օգոստոսի.

Ռատիկանութիւնը բաց արու հայկական մի դաւադրութիւն, որը եթէ աջողէր իրագործւել մի քանի հազար մարդկային զոհեր պիտի պատճառէր: Ամբողջ քաղաքը յուզման մէջ է: Գտնուած են 140 ուժեր և դժոխային մեքենաներ, մեծ քանակութեամբ թոյն և մանրամասն նախադիժներ, որոնցից երեւում է, որ սեպտեմբերի 1-ին զարհուրելի ծրագրեր պիտի իրագործէր: Քաղաքի շուրջ պիտի թունաւորէր, դազի աղբիւրը պիտի պայթէր և սպա մթութեան մէջ բոլոր հիւպատոսարանները, բանկերը, եկեղեցիները, հասարակական հիմնարկութիւնները օգը պիտի ցնդէին:

Ա. Պօլս, կիրակի.
Չիրբակաւուած հայերից մօտ 20 հոգի կը բերեն բարձր քննիչ ատենանի առջև: Այդ քննութիւնը պէտք է հաւատարմանայ կայ արդեօք ուժէ կապ սուլթանի դէմ եղած սպանութեան փորձի և Զմիւռնիայի դաւադրութեան միջև: Հասարակութեան բոլոր գաստակարգերը զբաղւած են Զմիւռնիայում արւած գիւտով: Կարծում

են, որ ուժանակային ուժերը են թագաւորած ուրիշ քաղաքներում ևս, նոյնպէս Ա. Պօլսոն: Երբեք իշխանութիւնները այն աստիճան մտատանջ են այդ շշուկների և Զմիւռնիոյ դաւադրութեան պատճառով, որ չեն կարող զբաղւել պետական գործերով, որոնք երկար ժամանակից ի վեր առկա են մնացել:

R e u t e r

Die Zeit-ին գրում են Ա. Պօլսից, 20 օգոստոսի.
Զմիւռնիայում բացւած հայկական դաւադրութիւնը յուզման է յարուցանում ոչ միայն կըլլանքում, այլ և դիւանագիտական շրջաններում, որովհետեւ նա մի նշան է, որ Երբեք սպանութեան փորձը մէկ մասն է միայն եղել լայն ճիւղաւորած մի դաւադրութեան:

Սեպտեմբերի 1-ի համար ընդարձակ և խիստ միջոցներ են ձեռք առնուած: Աւեր կայ, թէ կըլլանք պէտք է իսպառ կղզիացրել շուրջանակի մի պարիսպով և թէ սահմանակից թաղերը պիտի աւերւին:

Ա. Պօլս, 20 օգոստոսի

Հայկական դաւադրութեան բացումը Զմիւռնիայում մեծ սարսափ է տարածել ամբողջ օսմանեան կայսրութեան վրայ: Գաւազրութեան հետքը դտել է մի յոյն վաճառական, Ազրէ Պրոտօպապա անունով:

Daily Mail

«Темпс»-ին հետազոտում են.

Ռատիկանութիւնը, խուզարկելով, գտաւ Զմիւռնիայում 115 ուժեր, 3 դժոխային մեքենայ, ուժանակի մեծ քանակութիւն և ուրիշ պայթուցիկ նյութեր: Կարծում են, որ լաց են արել ընդարձակ մի դաւադրութիւն: Բռնուած նամակներից երևում է, որ օգոստոսի 31-ին, սուլթանի գահակալութեան տարիպարման կառավարական պալատը, հիւպատոսարանները և լանկերը օգը պիտի ցնդուին: Իմացել են, որ հայկական կոմիտէն վարձել է մի փոքրիկ խանութ, որտեղից ա կ ա ո կարող էր տարւել դէպի բանկը, ինչպէս որ մակեդոնացիք արել էին Սալոնիկում: Քննութիւնը դեռ շարունակում է. 40 հոգի ձերբակալուած են: Անցազրկների բլուրտի և կայարանները ենթարկուած են խիստ հսկողութեան: Հայկական թաղը զրաված է գործերով: Միծ յուզումը, սիրում քաղաքի մէջ: Երկիւղ են կրում կոտորածներից:

«Die Zeit»-ին հետազոտում են.

Ռոտվիտուս Ժօլիսը չէր ուզում ոչ մի ցուցմունք տալ Բիլզիական վեսպանին — չը հայտն էր նրան խոտորում էին բոլորովին անպատիւ ու սուտ թուղի,—հրտ այժմիան խոտորվանութիւնը հետեւում է երկուստ տասնիստիս սպանութիւնների:

Շվեյցարական թերթերը հաղորդում են, որ Ժընեվի թիւրքական հիւպատոսը դիմում է արել ոստիկանութեան ու արդարագատութեան միջոցաւ Օ դ ի է ի ն և մասնացոյց լինելով Ժընեվում ապրող մի կասկածելի անձնաւորութեան վրայ, խնդրել է ձեռնարկել անմիջական քննութեան: Օգիէն պատասխանել է, որ առանց Բերնի դաշնակցական կառավարութեան հրահանգների նա ոչինչ չէ կարող անել: Նոյն թերթերը հաղորդում են այժմ, որ Միւնխի բէյ, Պարիզի տաճկական դեսպանը մօտ օրերս պետի գայ Շվեյցարիա, անշուշտ փորձելու

ճնշում գործ դնելու դաշնակցական կառավարութեան վրայ: Սակայն հասարակական կարծիքը Հվէյցարիայում արդէն որոշ կերպով հասկացնում է սուլթանի կառավարութեան, որ Հվէյցարիան չէ կարող մատնել քաղաքական «յանցաւորներին»: Աւշադրութեան արժանի է մի քանի թէրթերի առանձնապէս կծու լիզուն թիրքական պաշտօնականների դիմուհիների առթիւ:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Կովկասից վերջին պահուստ ստացած նամակները նկարագրում են ժողովրդական բուռն ուրախութեան ցոյցերը՝ դարձողների վերաբացման և եկեղեցական գոյքերի վերագործի առթիւ: Հայ ժողովուրդը ամենուրեք խորապէս գիտակցում է, որ բաւարարութեան այդ զինումը հետևանք է իր ըմբոստութեան, իր ծնած ու սնած յեղափոխական կազմակերպութեան յանգու գն ընթացքի, և հանդիսաւոր թափօրներով նա այսօր տօնում է հայկական շարժման յաղթանակը:

Տ Ե Ր Ր Օ Ր

Ս ա յ ն ա ձ ո ը ու մ (Տաճկահայաստան), Հ. Յ. Գաշնակցութեան տեղական Կ. Կոմիտէի որոշմամբ՝ տէրօրի են ենթարկւած կախաղանի միջոցով երկու լրտես-մատնիչներ՝ Թ ա Թ վ ա ն ց ի Բ Ղ Դ Օ և Ջ Տ Օ ր ց ի Գ ը ի Գ ո Ր: Սերօրի օրերից ի վեր այդ երկու վատերը, ձեռք ձեռքի տւած, Ալիբէկի վայրագութիւններին էին մատնում հայ երիտասարդներին և հարիւրաւոր գերդաստաններ էին դժբախտացնում: Նրանք մեղսակից եղած են Յակոբ-Ճարտարի սպանման և ընկ. Սօղօրի ու Համբարձուհի բանտարկութեան:

«ԴՐՕՇԱԿ» Ի Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ստացանք վերջին պահում հետևեալ հետազոտողները:
ՇՈՒՇԻ, 29 յուլիսի.
Ձեռյայտ խաղաղասիրական յանձնաժողովի Հանքերին, Թիւրք համալսարանականները աշողեցին զրուել ազգաբնակչութիւնը. ա. յօսր (օգ. 29, նոր տում.) Թիւրքերը սպանեցին մէկ հայի, վիրաւորեցին երկուսին և խլեցին գէնքերը: Հայերը փորձեցին յիտ առնել գէնքերը և զրա վրայ սկսեց ընդհալում ու փոխադարձ հրացանածովութիւն: Առ այժմ սպանւած են 9 հայ և 30-ից տելի Թիւրք:

ՇՈՒՇԻ, 30 յուլիսի.

Հրացանածովութիւնը շարունակում է: Թիւրքերի կորուստը մեծ է: Հայերը գերի են վերցրել 100-ից տելի Թիւրք, զինութեամբ ամեղով նրանց: Գերիները հետ վարում են շատ լուս: Բազմաթիւ Թիւրքական տներ այրում են: Թիւրքերը, հեղի լինած, հաշտութիւն են խնդրում: Բողոքը մերժեց պաշտօնութեան տակ է:

ԹիճՆԻՍ, 31 օգ.

Շուրմ Թիւրքերը յարձակելով հայերի վրայ, սպանեցին 3 հոգի: Հայերը ամմիջապէս պատասխանեցին, և կոխը ընդամերացաւ: Առաջին օրը սպանւած են 10 հայ և 34 Թուրք: Կոխը տելի սատակացաւ յաջորդ օրը: Հայերը ընդամերացին և գերի վերցրին յայտնի հիւսէյին բէկ Քիւսանչլիական իր մատուրդներով և հարսը չուի տրիշ Թիւրք

կուողներ: Գերիները հետ շատ լաւ են վարում: Հայերը հաւաքում են վիրաւոր Թիւրքերին և նրանց հիւանդանոց տանում: Ձորանցներում ապաստանել են բազմաթիւ Թիւրքեր: Թիւրք երեկիները տրամադրւած չեն խաղաղութիւն խնդրելու, բայց աւագակ պարագլուխները մահաւան սուլուհալլի տակ չեն թողնում: Հայերից ընդամենը սպանւած են 10 և վիրաւորւած 20 հոգի: Միմէ և այժմ Թիւրք սպանւածները Թիւրք 85 է, վիրաւորները բազմաթիւ են: Գանձակի նահանգապետը տըղեց կօզակները հետ ուժով մտնել քաղաքը: Նա օգնակամ զօրք և թնդաթիւ է պահում:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ա Ջ Դ

Նկատելով որ Պաշքանեան Կ. Կ. Կոմիտէի նախկին անդամ Վարդօ (Արվախի-Իսաք) Պաշքանեան շրջանի հասցիներէն իւրացուցած 4673 արծաթ և 1339 սակի լէվ և կազմակերպական որոշ յանձնարարութեան համար Արևելեան Բիւրօյի կողմէն իրեն ուղարկւած 2000 սուրբի գումարները մինչև հիմա չէ յանձնած Պաշնակցական պատկանեալ մարմիններուն.
Նկատելով որ վերջիշեալ գումարները չը յանձնելու առթիւ Վարդօյի կողմէն Արևմտեան Բիւրօյի ուղարկած գրաւոր բացատրութիւնները միանգամայն բռնապօսիկ են.
Եւ հիմնելով Պաշքանեան վերջին շրջանական ժողովի արձանագրութեան, Կ. Կոմիտէի անդակագրի և պաշտօնական գեղեցման, ինչպէս նաև Արևելեան Բիւրօյի տւած վերջին լրացուցիչ անդակութեան վրայ,
Ներկայիս հրապարակով կը հրաւիրենք պ. Վարդօն, որ 15 օրւան միջոցին տայ դրական պահանջութիւն՝ ամբողջովին վերադարձնելու համար վերջիշեալ գումարները մինչև 1/13 հոկտ. 1905 թ.:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

- Ալան-Կարօէն Ֆր: 10, Գ-ից 1, 20
- Ռ ու ս ա տ ա ն. — ԴՐԱՄ Կօմիտէին՝ 35,000 Ֆրանք:
- Նյգեստանցի Ա. Ա.-ից (50 ըուրլի) 132, 50
- Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա. — յօգուտ Հայ Ուսանողական Ռազմական Ուսումնական ֆոնտի Կովկասում՝
- Բերլինի ուսանողներից 171 մարկ 30 Ֆ.
- Միւնխէնի " 38 "
- Տարմաշաղի " 34 "
- Շորապուրգի " 10 "
- Գեթթէնի " 10 "
- Նէյնշտէթից " 2 "
- Գումար 265 " 30 Ֆ. Ֆր. 323, 85
- Ընդհ. գումար 35167 Ֆր. 58 սանդ.

Դ-ՐՈՐԴ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ.

ԱՆԿՐԱՊԱՏ Կօմիտէի առ 1-յանիսի 1905 թ.—
Հետեալ խմբերից՝ Պևո 12. 30, Աես-Թարայ 20, Պևո 13. 50, Պևո (Աեսիս) 96. 30, Աարվակների 6. 55, Կարօ 4. 50, Աեր-Փաւս (աւեսիս) 60, Անգրանիկ (ներ. Կ.) 7. 50, Պևո 25, Անգրանիկ (ներ. Կ.) 13. 50, Աեր-Փաւս Երկրորդից 55, Աեր-Փաւս Երկրորդ 5, Աարվակների 7. 20, Գնունի (քալաս-բըր.) 30, Կարօ 5, Էս 5, Արհեստարայ 34, Պևո 35, Էս 20, Հրայր (Բանդ. Կ.) 17. 70, Արհեստարայ 30, Աեր-Փաւս 7. 50, Էս 15. 53, Գունլաւ Կլ. Հրայր 20, Կայմակ 5. 20, Էսմի 3. 50, Կարօ 6. 40, Էներ 8, Արհեստարայ 81, Աեր-Փաւս (ներկայ) 74, Բարկէն-Սիւնի 3. 90, Պևո 38. 35, Էս 8. 10, Կարօ 6, Էսմի 7, Կայմակ 4. 45, Գնունի 5. 30, Եսմի 13. 20, Թունան 6, Կալիկայ 20, Արհեստարայ 34. 10, Կոնի 4. 50, Ջարմի Բ. 7, Վաւալաւէ 11. 50, Յամիկ 4, Ջարմի 5. 15, Կարօ 6. 20, Կայմակ 3. 50, Պևո 9. 50, Վալակ 8, Կոնի 6. 25, Էներ 6, Եսմի 10. 5, Ջարմի 5. 15, Էս 5. 65,

